

81.

94333






Bezugs-ist eingetragene
29 Aug. 1923.
y. m. c. a.

Bayerische Staatsbibliothek



<36648820460012



ՍԱՆԴՈՒԽ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ

Թ. ԹԵՐԶԵԱՆ

ԵՐԿՐՈՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ՀԵՂԻՆԱԿԻՆ

1871

Bayrische
Staatsbibliothek
München

Ներկայացուցման իրաւունքը Օրթագիւղի Բարեսէր
Ընկերութեանն է:

Հայկական Էմիգրացիոն
29 հոկ. 1923

ՍԱՆԴՈՒԽՏ

Ֆոյս

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ



ՍԱՆԱՏՐՈՒԿ	Արայ Հայոց
ՍԱՆԴՈՒԽՏ	Դոսաբ Սանապրէոյ
ԵՐՈՒԱՆԴ	Սպարապէտ Հայոց
Ս. ԹԱԴԷՈՍ	Առաքեալ
ՇԱԽԱՐԵ	Պաշտպան
ՎԱՀՐԱՄ	Պապգամաւոր
ԱՐՄՈԳ	Քրիստոս
ԽՈՒ	Դահլիճ
ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՔ	

Տեսարանն յԱրքունիս Սանապրէոյ. ի Ե. արարուածի բանտ
ապա Դաշտն Շաւարշան:



ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՍԱՆԱՏՐՈՒԿ, ԹԱԴԷՈՍ, ՇԱԽԱՐԵ, ԵՐՈՒԱՆԴ

ԹԱԴԷՈՍ. Այս ինքն է ճշմարիտ Աստուածը՝ ով Թագաւոր, ինքը միայն Աստուած է: Այս Տիեզերքս որ բերաւ որ հրաշալեզօք զարդարուած է՝ իրեն աչքին գիմացը ոչինչ է, և ոչնչութիւնը աւելի գեղեցիկ Տիեզերքներով լցուած է իրեն համար. ինքը ըսաւ և ամէն բան եղաւ. ամէն բան զինքը կը քարոզէ: Մինչդեռ իր զօրութիւնը կը հռչակեն մրրիկք՝ որոնց մէջ ցամամբ կը պտըտի, և փայլակները՝ որ իր նայուածքներէն կը Թափթըփին, մինչդեռ իր զօրութիւնը կը քա-

129
րողէն ուրիշ տխուրոված տեսնին իրենց հօր արարչին հա-
յեկն են, և ուրիշ սանձ չունին իրենց անյագ կատաղու-
թեանը՝ բայց միայն իր յունից սպառնալիքը՝ իր սէրը կը քա-
րողէ առաւօտեան անուշ հողմը՝ որ իր զուարթ թեւիկնե-
րովը կարծես ծաղկանց արցունքը կը սրբէ, իր սէրը՝ անպա-
տըստար թռչնոց ձագը՝ որ բնագոյմամբ աչքերը դէպ 'ի երկինք
կը վերցընէ բոյնէն, և իր սէրը դարձեալ արեւը՝ որ երկնից
ընդարձակութեան մէջ կը թափառի՝ աչքերը դարձուցած
դէպ 'ի վէհին աթոռը, որուն կարծես հրամանացը կը
սպասէ :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Եւ ո՛ր տեսնեմքու Աստուծոյդ հետքերը :
ԹԱԴԷՈՍ. Փու աստուծոցդ աւերակներուն վրայ : Ինքը
յաւիտենականութեան ամպերուն մէջ ծածկուած՝ Տիեզե-
րաց վրայէն կախած է արդարութեան կշիռքը. հոն են թա-
գերը և թագաւորութիւնները, իր ձեռքն է որ անյայտ ճամ-
բաներով կ'առաջնորդէ զմահկանացուն որ կը գոռողանայ՝
չգիտնալով հօր ձեռքի մը գործիքն ըլլալը, սուրը որ կը փայ-
լի՝ կը սպառնայ՝ կը վիրաւորէ, բայց վերջապէս ինքն ալ կը
խորտակի. և իր գործած աւերակներուն վրայ ինքն ալ կը
փչի : Այն ձեռքը կը բարձրացընէ զմարդ ինչուան ուր որ
որոշած է . . . և մինչդեռ բոլոր Տիեզերաց աչքերը դէպ 'ի
այն հպարտը դարձած են՝ այն ամբարտաւան շէնքը կը կոր-
ծանի կ'իյնայ. ինչպէս թանձր մուխը որ խաղաղ օդին մէջ կը
դիզուի՝ և իր մութ ձեռքին տակ արեւն անգամ կը ծածկէ,
բայց հովը փչածին պէս կը ցնդէ զայն . . . Ո՛ր ես Բաբելոն,
Նինուէ՝ քու բուրգերդ ո՛ւր են . . . այն ի՞նչ լուութիւն կը տի-
րէ ձեր ճամբաներուն մէջ . . . քու փառքդ ալ անըջունը ա-
ւերակացդ վրայ կը քնանայ . . . հոն ուրեմն ո՛վ թագաւոր,
հոն դացէք դուք ալ, ո՛վ ժողովուրդք, սորվելու համար. այն
լուութիւնը ձեզի ամէն բան պատմէ. և կործանեալ բուրգերը
աւելի սարսափեցընեն պիտի զձեզ՝ քան թէ երբ բիւրաւոր
կտրիճներով պաշտպանուած էին. այն աւերակներուն նա-
յեցէք. աստուծութիւն մը անոնց վրայէն անցած է. կար-
դացէք թէ այն խորտակեալ պարիսպներուն վրայ ի՞նչ գրեր է
Ամենակալին մատը . . . « ՈՃՆՁՈՒԹԻՒՆ » :

ԵՐՈՒԱՆԴ. Արդարեւ վսեմ և գեղեցիկ գողափարք :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ի՞նչպէս յազատի հրաշք կրնայ գործած

ըլլաւ Աստուած մը, որ մարդկանցմէ նախատալից կերպով խաչուած է :

ԹԱՂԵՈՍ. Նախատալից կը կոչես մարդկութեան համար մեռնիլ : Տիեզերք լի անօրէնութեամբ՝ կորստեան վիհը հասած էր. արդարութեան սուրը երկնից երեսը կը սպառնար... երբոր յանկարծ ձայն մը, (« Կեցի՛ր ») գոչեց՝ « ահա ամենուն տեղ ես կը մեռնիմ » . այս ըսելով, սէր անպատում, Աստուած մը իր փառքը թողլով մարդ եղաւ... Աստուած մը մեռաւ... այն ահաւոր անդունդը որ կայ աստուածութեան և ոչնչին մէջ՝ սէրը լեցուց... :

ԵՐՈՒԱՆԻ. Քրիստոնէից այս դաղափարները որ կը լսեմ, կը կարծեմ թէ ասոնք կամ մէյմէկ խենդ են և կամ մէյմէկ աստուած :

ԹԱՂԵՈՍ. Ո՛վ կրնայ քրիստոնէի մը սրտին զգացածը բացատրել. քիչ կը համարի ինքը իր Աստուծոյն սիրոյն կեանք մը միայն զոհելը :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Եթէ սիրոյ կրօնք կը կոչես այն որ արիւն և մահ կը քարոզէ՝ որչափ աւելի սիրոյ ըլլայ պիտի մեր կրօնքը որ հեշտութեամբ կ'ըլլայ : Գեղեցիկ սէր՝ որ կոյս մը իր մանկութեան վարդերը արեանցը մէջ թառամեցնէ. երիտասարդը՝ որ հայրենեաց պաշտպան մը կը խոստանար՝ գերեզմանին մէջ իր յոյսերը թաղէ :

ԹԱՂԵՈՍ. Քրիստոնէի մը համար գերեզմանը անմահութեան գոռն է :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այդ անմահութեան գռնէն՝ շատերը անգիտի աշխարհ խաւերեցի. բայց ձեր անիծեալ կրօնքը հարիւր գըլխով հրեշին կը նմանի, որուն գլուխները որչափ կը կարէին՝ այնչափ նորէն կը բուսնէր : Ո՛հ, գիտնայի թէ արմատը ի՞նչ է, և խզէի :

ԹԱՂԵՈՍ. Դողմ. ինքը քեզի կը լսէ :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այո, պիտի կործանի գիմացս քու Աստուածդ. իրմէ հետք մըն ալ պիտի չմնայ երկրիս վրայ. ես ինքնին պիտի կոխկրօտեմ իր տաճարները : Եւ ինքը պիտի չգըռնայ ապաստան մը երկրիս վրայ՝ ցորչափ ապրի Սանատրուկ, ցորչափ ալ քաջայաղթ սուրը սարսափ ազգէ աշխարհիս. պիտի չլսէ ուրիշ երգեր՝ բայց զողբաձայն հեծեծանս իր հետևողացը՝ զորս ես պիտի խողովողեմ : Այլ եթէ ոխերիմ

բագգը՝ իրեն յափշտակել տայ զաշխարհ իմ ձեռքէս, աւերակներ միայն պիտի գտնէ՝ ուր ախուր լոյս մը պիտի արձըկէն իր հրաբորբոք տաճարները:

ԹԱԴԻՈՍ. Սրբագոյն խորան մը, աւելի հաճոյ խոռնկ մ'ունի մեր Աստուածը, և դու զայն չէս կրնար կորզել... մեր սիրտը և մեր արցունքը: Զարկ՝ սպաննէ... մեր յետին հաւաքանքը քու փրկութեանդ համար աղօթք մ'ըլլայ պիտի:— Բայց գիտցիր թէ որչափ ալ անսպառ ըլլայ իր երկայնամտութիւնը՝ եթէ ինքը ցասմամբ ելլայ իր աթոռէն՝ դողան պիտի երկինք իր նայուածքէն, և մինչդեռ դու զարհուրած պիտի փախչես իր առջև՝ խուռն կայծակունք պիտի թօթափին դէռուդ վրայ, և իւրաքանչիւր քայլիդ տակ նորանոր անդունդներ պիտի բացուին: Արքայ, նեղ են քեզի հիմայ Տիեզերք... և սակայն քիչ ատենէն բոլոր փառօքդ հանդերձ՝ քանի մը թիզ հող միայն պիտի գրաւես:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այո, կամանձայն երկրիս տակ՝ կամբողոր երկրիս վրայ իշխան. լի մանկական եռանդեամբ ելայ ես առնուլ Թագեոս, ինչպէս անտառք մրդկին դէմ՝ այնպէս խոնարհեցան ազգերը առջևս. այն կտրիճին ոտքին տակ կը կոխկըռաուէր թշնամին՝ և իր արենակաթ սրոյն վրայ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ գրուած էր. այն սուրը ձեռքիս մէջ փրկեցաւ. բայց կենդանի է դեռ նոյն սիրտը: Դեռ երիտասարդ՝ աշխարհիս հետ պատերազմեցայ և յաղթեցի, հիմայ ալևոր՝ Աստուած մը դիւ պատերազմի կը հրաւիրէ: Տեսնանք, յաղթութիւնը որո՞ւնն է: (Մէֆի):

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՅԱՆԴՈՒԹԵՆ ԵՒ ԹԱԴԻՈՍ

ԹԱԴԻՈՍ. Ի՞նչ անհաշտ ատելութիւն կը սնուցանէ հայրդ մեր կրօնին դէմ:

ՅԱՆԴՈՒԹԵՆ. Դառն յիշատակներ կը զարթուցանէ մտքին մէջ այս գաղափարը: Բայց դու սուրբ ծերունի՝ կրկնէ այդ սուրբ կրօնքին նկարագիրը որ հոգիս մսիթարուի:

ԹԱԴԻՈՍ. Եթէ մսիթարութեան կը բաղձաս՝ գիմէ իր ոտքը. քրիստոնէայ մը իր վշտերը խաչին պատուանդանը կը

դնէ, ինքը իրեն կը կանչէ զանոնք որ աշխարհիս թշուառու թեանց տակ կը հեծեն:

ՍԱՆԴՈՒԻՑ. Ո՛րչափ քաղցր է աշխարհիս վտերէն ազա-
տելով այս անձկալի գաւառներուն մէջ թափառիլ. ինչ
քաղցր է հառաչել մէկու մը դէմ՝ որ հառաչանքներդ կը
կրկնէ. ո՛հ, որչափ քաղցր է լալ Աստուծոյ մը դիմաց՝ որ
լացեր է:...

ԹԱԳԻՅԱՅ. Ով որ առանձին իր վտերը՝ մտածելով իր Աս-
տուծոյն գիմաց չէ կեցած արցունք թափելու՝ այնպիսին
դեռ չգիտեր թէ ճշմարիտ հաճոյք մը ինչ է: Գլխով մեր հոգւոյն
վրայ կը հսկէ ինքը՝ ինչպէս թուշուն մը իր բոյնին վրայ:

ՍԱՆԴՈՒԻՑ. Ո՛հ, որչափ գլխայ պիտի օրիորդի մը որ վըշ-
տաց ուկիւնոսի մը մէջ կ'ալէկոծի. ըսէ ինձի, արդեօք այն
գեղեցիկ ասպարէզներուն մէջ որ սրտիս գիմաց կը բանաս՝
կրնամ ես ալ սլանալ:

ԹԱԳԻՅԱՅ. Իր գրկերը բաց են զամենքը ընդունելու:

ՍԱՆԴՈՒԻՑ. Ո՛հ տէր՝ միտքս լուսաւորէ. և թէ որ հիմա
քու հագիդ որ բոլոր Տիեզերքս կը լեցնէ՝ իմ քովս ալ կեցեր
կը լսէ հառաչանքներուն, կ'իմանայ սրտիս բաբախմունքը,
ո՛հ, դու գիտես իմ լեզուով չբացատրուելու անձկութիւն-
ներս:

ԹԱԳԻՅԱՅ. Զօրացիր, կոյս. յոյսդ իրեն վրայ հաստատէ:

ՍԱՆԴՈՒԻՑ. Ամէն օր կը տեսնեմ քրիստոնեաները ան-
գուծ մահուան գատապարտուած, և ինծի՝ որ անոնց չեմ
կրնար օգնել՝ տխուր բանս մը կ'երևայ այս մեծաշուք ապա-
րանքս: Եւ երբ արցունքներէ յոգնած աչքերս գոցուին՝
ստուերներուն մէջ կը կարծեմ տեսնել խումբ մը երանելի
ոգեաց որ ձիւնածոյր պատմութիւններ հագած՝ ժպտելով
ականջիս տակէն կը հծծեն. « Հետերնիս եկուր »:

ԹԱԳԻՅԱՅ. Լուրթեամբ համբերել, գերմարդկային զգաց-
մամբ սիրել մարդկութիւնը. — ահա ինչ որ իմ պաշտած Աս-
տուածս կը հրամայէ:

ՍԱՆԴՈՒԻՑ. Սիրել... ա՛հ, լսէ, հայր... չես գիտեր
որչափ սրտատուջոր յեշտակներ մաքիս մէջ կը զարթուցա-
նես...:

ԹԱԳԻՅԱՅ. Կը մօտենայ ահա մէկը, և կը լսէ զմեզ, հեռա-
նանք... (ՄԵԻԻԻ):

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԵՐՈՒԱՆԴ

Արտասուալից աչօք հեռացաւ ինձմէ այն գեղեցիկ հրեշտակը . . . որչափ անուշ է ինձի կոխել այն տեղերը զոր կը կոխէ. շնչել այն օդը զոր ինքը կը շնչէ. երբոր աչքին դիմացն եմ՝ լեզուս առաջ չերթար խօսք մը ըսելու, աչքերս չեն համարձակիր իրեն նայիլ, անծանօթ զօրութիւն մը զիս կ'արգիլէ, իր պատկերը գեղեցիկ հրեշտակի նման՝ հոգւոյս մէջ կը հանգչի . . . ո՛հ, ի՛նչ քաղցր կուգային ինձի իր հառաչանքները այս նոր կրօնքիս վրայ . . . այո՛, Սանգրխտին կրօնքը իմ կրօնքս ալ է: Այլ ի՛նչ կ'ըսեմ . . . մի բարկանաք ո՛վ աստուածք . . . սէրը միտքս խռովեց . . . բայց ի՛նչ, եթէ սէրը պաշտեմ՝ զձեզ պաշտած չեմ ըլլար ուրիշ անուամբ. որովհետեւ թէ որ աստուած էք՝ սէր ալ պիտի ըլլաք, թէ որ սէր չէք՝ աստուած ալ չէք: Եւ ո՛վ բնութեան կ'ազդէ այն կարօտութիւնը սիրտ սրտի հանգչեցնելու. ո՛վ դրեր է սրտին մէջ սէրը, այս բոցը որուն որչափ նիւթ աւելցնես՝ այնչափ աւելի կ'ուզէ: Բայց թերեւս այս աշխարհս միայն փափագելու տեղ է՝ և ոչ փափագի մը կատարուելուն . . . թերեւս օրորոցէն գերեզման ելած միջոցը շատ կարճ է սիրոյ . . . թերեւս աստուածները այս աստուերները տուեր են՝ որ ինչպէս տղայն երփներանգ թիթեռնիկէ մը խաբուած ետեկն խնայով կը խոտողի, այնպէս մարդ ասոնց ետեկն ինկած վազէ, ինչուան որ յանկարծ մահուան անդունդը թաւալի . . . : Բայց ի՛նչ յանցանք ունէր ողնշութիւնը, ո՛վ գիբ, որ էակ մը ըլլայ՝ կարօտութիւն իմանայ՝ և այն կարօտը չէցուի . . . Այլ ոչ մարդս է որ ինքզինքը կը խաբէ . . . այո՛. այս անձկութեանց հովտին մէջ, այս մշտախռով ովկիանոսին մէջ՝ որուն եզերքը սեպացեալ ժայռեր կը բարձրանան, ինքզինքը խաբելու համար, աստուածք մարդուս զմայլեցուցիչ ծաղկապսակ քնար մը տուեր են: Այս քնարը՝ մարդուս սիրտն է. և իւրաքանչիւր կիրքերը՝ անոր թելերն են. անոր գիւթիչ ձայներէն ինքզինքը խաբելով մարդս կ'անցնի: Աւա՛ղ ուրեմն, ի՛նչ է եզերմարդկութիւնը . . . ծաղիկներով զարդարուած զուարակ մը՝

որ ողջակեզ ըլլալու կ'երթայ... և ո՛ւր է իր սեղանը... գե-
րեզմա՛ն մը... գերեզմա՛նը՝ որուն անդունդը յաւիտենակա-
նութեան չափ խոր է: Ո՛հ, բանար ինձի գթած ձեռք մը ա-
պառնոյն քօղը՝ և տեսնէի թէ երկինք ինձի ի՛նչ վճռեր են...
ճակատագիրս իմանայի...: Ո՛վ դուք՝ որ սրտիս վշտերը և
տարակոյսները կը ճանչնաք, գթած աստուածք սիրոյ, ար-
ցունքներն ալ չեն բաւեր ջնջելու այն դառն վճիռները, զոր
Պերբեմն ձեր արգարուծիւնը մարդուս ճակատին վրայ գրոշմեց:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՆՈՅՆ ԵՒ ՇԱԽԱՐԵ

ՇԱԽԱՐԵ. Թող մէկդի տխրուծիւնդ, բարեկամ. վշտերու
ալ վերջ մը կայ:

ԵՐՈՒԱՆԴ. Իմ վշտերս միայն կենացս հետ կրնան վեր-
ջանալ:

ՇԱԽԱՐԵ. Հզօր են աստուածք, և ինչ որ շատ անգամ տկար
մահացողք չէին կրնար յուսալ՝ անոնք կը կատարեն. ան-
յայտ են մարդկանց անոնց ճամբաները: Շատ անգամ մարդ-
ուզելով ապագային քօղը վերցընել՝ չեղած և չըլլալէ դառ-
նուծիւններ կը պատրաստէ իր անձին:

ԵՐՈՒԱՆԴ. Ո՛ւր էր թէ սուտ ելլային վախերս՝ ինչպէս ին-
չուան հիմայ սուտ ելած են յոյսերս, ... կը կարծէի թէ սէրը
երջանիկ պիտի ընէ զիս, բայց իրեն ծաղկափթիթ ճամբուն
տակ անդունդներ կան... Ա՛յ ծածկելու ժամանակ չէ, յայտ-
նեմ քեզի իմ գաղտնիքներս՝ ո՛վ բարեկամ. թերեւս սիրտս ի-
րեն արձագանգ մը գտնելով մխիթարուի..., կը սիրեմ... ո՛հ
չեմ կրնար այն անունը հնչել՝ որ սիրտս չիւռովի... Սանդուխ-
տը կը սիրեմ:

ՇԱԽԱՐԵ. Սանդուխտ... Հայոց թագուհին... արգարե
սիրելի անձ... բայց ի՛նչպէս սկսաւ այս սէրը:

ԵՐՈՒԱՆԴ. Ալանաց գէմ պատերազմէն երբ կը դառնայի՝
գիտես թէ բաղդը ինձի շնորհեր էր յաղթուծեան փառքը...
Սանաարկոյ կիսակործան գահը հաստատելէս ետեւ՝ արիւ-
նաներկ սուրս փութացայ իր ոտքը դնել, ինքն ալ յաղթաւ-

կան բրաբրիոնով մը ուղեց զիս վարձատրել: Թողվեցան հան-
դիսականք՝ իշխաններ՝ զօրագլուխք՝ զօրականք և ժողո-
վուրդք. անցաւ իր գահը Սանատրուկ ալ... Սանգուխտ՝
այն սիրելի հրեշտակն ալ՝ հոն էր... աստուածուհւոյ մը
նման իր հօրը քով նստած՝ նոր փառք կ'աւելցնէր Հայոց
գահուն. այն տասներկեց գարունները որ զինքը տեսեր էին՝
իւրաքանչիւրը անցնելու ատեն՝ իբրեւ սիրոյ յիշատակ կար-
ծես իր ճակտին վրայ մէյմէկ վարդ թողուցեր էին: Իրենթ
հօրը հրամանաւ ձեռքն առաւ ոսկեղէն պսակը՝ և անուշ
ժպիտով մը ինծի յանձնեց... Դո՛ւք գիտէք աստե՛ղք՝ թէ
ս'ըջափ ան ժպիտը ինձի թաղէն ալ անուշ եկաւ... տաքնա-
պայոյզ երեսը նայեցայ... և երկուքներնուս աչքերը իրարու
հանդիպեցան: Թագաւորը մէկդիէն Հայրենեաց փրկիչ՝ Ա-
ռաքինի կոչելով զիս կը գովէր, զօրականք մէկալ գիէն Յաղ-
թութեան գլուխ կ'անուանէին զիս, ժողովուրդն ալ ցնծու-
թեամբ « Կեցցէ » ներով օդը կը թնդացնէր... ես անշարժ
Սանգուխտի գիւմաց կեցեր էի, և այնպէս կուգային ականջիս
այն աղաղակները՝ ինչպէս երկնաւոր երազներու մէջ յափըշ-
տակեալ հոգւոյ մը՝ երկրիս նուազ և հեռաւոր ձայները:

ԵԱՒԱՐԵ. Աստղիկ յաջողէ իղձերդ:

ԵՐՈՒԱՆԻ. Փշալից տարակոյսներու մէջ կը ծփայ հոգիս:
Երբեմն զուարթ կ'երևակայեմ զինքը գրկացս մէջ, և ցնորե-
լով կը կարծեմ թէ իրեն պատմելով անցեալ վրտերս և տա-
րակոյսներս՝ անոնց վրայ այնպէս կը նայիմ՝ ինչպէս ալէկո-
ծութենէ ազատած նաւավար մը գեռ խռովայոյզ ծովուն
վրայ... Երբեմն կը կարծեմ՝ որ զիս կը մերժէ իրմէն... և
այն ատեն ոչ այլ ինչ կը խնդրեմ յերկնաւոր՝ բայց եթէ գե-
րեզման մը ուր կարենամ անձս և թշուառութիւններս ծած-
կել, գերեզման մը՝ որուն վրայ թերեւ գլխաւով վերջապէս
Սանգուխտ գայ և արտասուէ:

ԵԱՒԱՐԵ. Երբեք աստուածոց վրայ մի տարակուսիր. մեծ
է անոնց զօրութիւնը. տառապեալ մահացուին հառաչանք-
ները հրեղէն թւերով կը սլանան այն աստեղազարդ գաւառ-
ներուն մէջէն մինչև Արամազդայ աստուածոց աստուծոյն
ոտքը. և շատ անգամ իր հօր աչքը տկար մօրգուն վրայ
դառնալով զինքը վստաց վիհերէն երջանկութեան գահը կը
բարձրացնէ:

ԵՐՈՒԱՆԻ. Եւ ինչպէս այդպիսի յոյսերով մխիթարուիմ՝ քաջդ Շաւարշ, ես որ աչքովս ահաւոր գիպուածի մը վիպոյ եղայ. լսէ: Գիշեր մը նստեր էի վշտացս վրայ մտածելու. Անա-հիտնուիրական անտառներու ծայրերէն ամպոց վրայ արծաթի քողեր սփռելով՝ կարծես իրեն դահ մը կը պատրաստէր տնոյցմով. առուակները արիւքէ արիւք գլտորցընելով լուսնի պատկերը՝ կարծես անոր երգեր կը խոխոջէին. ան նուազ լոյսը պալատներուն՝ մեհակներուն եւ տաճարաց արծաթափայլ գմբէթներուն վրայ կը հանգչէր. Աչքս Սանատրկոյ արքունիքը գարձուցի... Ո՛վ տեսիլ... Սանդուխտ ձեռքին կրու-թընած կը նստէր պատուհանին դէմ. ո՛հ, ցնորած մտացս կ'ե-րևար թէ լուսինը չէ՝ այլ իր նայուածքը՝ որ բնութեան վրայ այն սիրելի խաղաղութիւնը կը սփռէ, իր աչքէն մարդըրտա-նման արցունքներ կը ցողէին, եռանդուն հառաչանքներ սրը-տէն կը բղկէին. և այնպէս տժգոյն և մեղամաղձ էր իր ճակա-տը՝ որ հրեշտակ մը յարտօսը կը շարժէր: Բայց յանկարծ արիւնս երակներուս մէջ սառեցաւ... իր ծոցէն անշայտ նշան մը հանեց՝ որ կը նմանի քրիստոնէից ազանդին Աստուծոյն, և սրտարուխ համբոյրներով խանդակաթ աչքերը ստէպ ստէպ երկինք կը վերցընէր:

ՇԱԽԱՐՇ. Սարսափով լեցուցին զիս քու խօսքերդ՝ քաջդ Երուանդ, չըլլայ թէ Սանդուխտ քրիստոնեայ եղած ըլլայ. կը դողամ այսպիսի բան մտածելու... Բայց շատ անգամ կը տեսնեմ Թագէոս ծերունին՝ որ այս նոր վարդապետութիւնը կը քարոզէ, և Սանդուխտ զմայլած մտիկ կ'ընէ: Սակայն գու-Երուանդ՝ չեմ կրցած Սանդխտոյ հետ տեսնուիլ:

ԵՐՈՒԱՆԻ. Ոչ կրնամ և ոչ կ'ուզեմ... Այն որ իմ հոգիս պիտի մխիթարէր՝ աւելի կը վերաւորէ զիս... Թերևս երկինք զմեզ միատեղ տարելու համար ստեղծեր են, անծանօթ ձեռք մը՝ մեր սրտերը արդէն միացուցած է. բայց դառն տա-րակոյսներ հոգիս կը խռովեն... Ասկէ վերջ ինձի միայն գեղ զինքը մոռնալն է. բայց ինչպէս ընեմ, ո՛ւր երթամ... ուր ալ ըլլամ, բնութիւնը կ'անհետանայ աչքէս, և իր լուսածիծաղ պատկերն ինձի կ'երևայ: Ի զուր հոգւոյս մէջ զգացած վիհս կը ջանամ լեցընել փառաց և յուսոյ երազներով. գաղտնի ձայն մը սրտիս մէջէն « Սանդուխտ » կը կրկնէ:

ՇԱԽԱՐՇ. Եւ Սանդուխտը շնորհէն պիտի քեզի երկինք:

ԵՐՈՒԱՆԻ. Զափազանց երջանիկ կ'ըլլայի իրմով՝ երկնից անգամ՝ նախանձելի: Ինքը թագուհի մըն է՝ ես իր խոնարհ ծառաներէն մէկը... ո՛հ, ո՛ւր էր թէ ես բոլոր աշխարհիս թագերը ձեռքս ունենայի՝ որ ոտքը նեաեղով ըսէի. « Ա՛ռ ասոնք ամէնքը իմ Սանդուխտս՝ և քու սիրտդ ինծի տուր... » : Բայց դու Շաւարշ՝ քու բարեկամիդ խնդրոյն մի՛ զլանար, և մի՛ ջանար ընդունայն տեղ իրեն գէմ կենալ: Դառն բաղդը դրոշմեր է ճակտիս վրայ սիրել և... ինձի դամբան մը պատրաստեր է... Թո՛ղ ուրեմն որ ճակատագիրս կատարուի: Ալանաց գէմ ունեցած պատերազմինս՝ յարմար առիթ է: Աստուածները որ կեանքս վայելելու միջոցները զլացեր են ինձի՝ անկից ազատելու ճամբան ահա կը ցուցնեն. ուրեմն երթամ պատերազմիմ... մեռնիմ: Բայց երբոր արիւնս երակներուս մէջ դադրած՝ սիրտս ա՛լ չցարնէ՝ և շրթուկներս այնչափ նըլաղին որ Սանդխտոյ անունն անգամ չկարենամ հնչել, ո՛հ, մեր բարեկամութեան սիրուն ըլլայ, Շաւարշ, երթաս այս մարմնոյ մէջ թնակող հրեշտակին իմ սէրս յայտնես... ըսես թէ ինքը՝ թէպէտ անմեղ՝ իմ մահուանս պատճառ կ'ըլլայ... ո՛հ գոնէ իմ գերեզմանս դայ արցունք մը թափելու: (Մէմի):

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԵՒ ՇԱԽԱՐԵ՛

ՇԱԽԱՐԵ. Տէր արքայ՝ գոյժ մը ունիմ՝ քեզի տալու :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Որչափ մեծ ըլլան աղէտք՝ այնչափ աւելի կը փայլի յաղթականին զօրութիւնը :

ՇԱԽԱՐԵ. Ձյագեցան աստուածները այնչափ քրիստոնէից արեամբը որ իրենց զոհեցիր. աւելի ահաւոր զոհ մը կը պահանջեն... քրիստոնէից աղանդը ընդունեցաւ նաև...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՞վ :

ՇԱԽԱՐԵ. Լեզուս առաջ չերթար :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ըսէ :

ՇԱԽԱՐԵ. Կը գողամ :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Սանդուխտը :

ՇԱԽԱՐԵ. Ահա ըսիր :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Սանդուխտ... իմ աղջիկս... քրիստոնեայ...

Ո՞վ անակնկալ հարուած... :

ՇԱԽԱՐԵ. Բայց դեռ...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛հ մի՛ ջանար զիս մխիթարել... մխիթարութիւնը թեթև վշտերու համար է... դեղերը կը զայրացնեն միայն մահաբեր խոց մը... Սանդուխտը քրիստոնեայ : Բայց ըսէ ինձի Շաւարշ՝ ապահով ես...

ՇԱԽԱՐԵ. Դժբաղդաբար շատ ապահով...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՞վ դիք, քրիստոնեայ է ուրեմն Սանդուխտը... աւանդ ինձ... այս կրօնքը ընդունած ատեն հայրը մօքէն չանցաւ :

ՇԱԽԱՐԵ. Անդարձ են ճակատագրին պատգամները. փութածմբ միայն թշուառութիւնը թեթևցնելու :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ի՞նչ ընելու եմ... թագաւոր եմ... հայր եմ... Արամազդը կը պաշտեմ :

ՇԱԽԱՐԵ. Տէր արքայ, աստուածք թշուառութիւնը ոչ եթէ չարութեան համար կը խաւրեն, այլ առաքինւոյն սիրտը

փորձելու: Եթէ ինձի ալ ներէք՝ յայանեմ կարծիքս: Մանօթ է ամենուն թէ ինչուան հիմայ Սանգուխա իր հօրը արժանաւոր դուստր եղած է: Իր միտքը՝ որ երկրիս վրայ հանգչելու տեղ մը չգտներ՝ խաբուելով քրիստոնէից նոր մոլորութենէն որ սէր ըսելով կ'երթան, զայն ընդունեցաւ: Բայց դեռ քու աղջիկդ է՝ քեզի հնազանդ, և մոլորութիւնն ալ ինչպէս կ'երևայ շատ խոր արմատացած չէ սրտին մէջ. ջանա՛ ուրեմն զինքը համոզել: Սպառնալիքը ընդունայն է. որովհետեւ քրիստոնեայք խելագարած՝ որչափ ասնջես զիրենք այնչափ կ'ուրախանան: Երազի մը պէս է կ'ըսեն այս աշխարհքըս, իր հաճոյքներն ալ վշտերն ալ սնոտի երազներ. իրենց իղձերը ապառնոյն վրայ կեդրոնացած է: Փորձով ալ տեսեր ենք որ իրենք աւելի յօժարութեամբ կը մատուցանեն իրենց վիզը դահձին սրոյն՝ քան թէ մեր ամենէն կտրիճնահատակները արեանց դաշտին վրայ. և մինչդեռ իրենց արիւնոտ գլուխը փռուոյ մէջ կը թաւալի՝ եթէ բառ մը արտասանեն ՍԵՐ է: Ուրեմն ջանալու է Սանդուխտին միտքը դարձնել քաղցրութեամբ. և որովհետեւ չափահաս օրիորդ մընէ, աւելի յարմար բան մը չեմ տեսնար քան զամուսնութիւն. մայրական խնամքը և զբաղմունքը՝ սիրելի ամուսնի մը գողտր գրկախառնութիւնները՝ իր աղայական երազները կը փարատեն:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Բայց ո՞վ կայ իրեն արժանաւոր և սիրելի:

ՇԱԽԱՐԾ. Քաջ և հայրենասէր Երուանդ:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Երուանդ... բայց Սանդուխտը ի՞նչ կ'ըսէ:

ՇԱԽԱՐԾ. Իր բերնէն իմանանք, երթամ զինքը կանչելու:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ի՞նչ սարսափելի տարակոյսներու մէջ հոգիս կը ծփայ... և դեռ չհոգնեցա՞ն երկինք ինձի հարուածներ իջեցնելէն... չսպառեցա՞ն երկնից կայծակները... ո՞վ բաղդ ոխերիմ... Հանգստեան տեղ մը առւէք ինձ, ո՞վ դիք, և ահա՛ ձեզի կը յանձնեմ բոլոր աշխարհս որ գողաց իմ նիզակէս... Ճանչցայ փառքը՝ և կ'սրհամար հեմ... անսահման անապատ մը շնոր-

հեցէք ինձ, որուն ընդարձակութեանը մէջ փշրին և անհետանան երկրիս ազմուկները. հոն ալեւոր ճակատս աղքատս գիրկը հանգչեցընեմ...:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՅՆ ԵՒ ՍԱՆԴՈՒԻՑ

ՍԱՆԴՈՒԻՑ. Հայր...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Դո՛ւստր սիրեցեալ...

ՍԱՆԴՈՒԻՑ. Ուրախ եմ որ զիս կանչեցիր. Բնջ մտիւթարու թիւն քու գիրկդ ըլլալ...:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Նոյն ուրախութեամբ հայրդ ալ զքեզ կը տեսնէ:

ՍԱՆԴՈՒԻՑ. Բայց ինչո՞ւ տխուր կ'երևաս:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Թագապսակ ճակտի մը վրայ երբեք երկինք չեն արձակեր երջանկութեան նշոյլը... կասկածք... հոգք...

ՍԱՆԴՈՒԻՑ. Բայց հիմա մէկգի թող հոգերդ, հայր. երեսս նայէ. թէ ոչ, ինձի ալ վշտերդ գէթ հաղորդէ. կ'ըսեն թէ ա. մենէն արտաձմիկի վշտերը հաղորդուելու որ ըլլան՝ կը թեթևանան:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛հ քովս կեցիր դուստր իմ Սանդուխտ. քու ձայնդ սիրոյ հրեշտակին պէս քաղցր է հոգւոյս. թող աղէտք իրենց միջին թւերով ճմլեն սիրտս. դու որ պիտոյ համար ստեղծուեր ես Ժպտէ Սանդուխտ, որ հայրդ սփռ. փռւի:

ՍԱՆԴՈՒԻՑ. Քանի՞ անգամ եղած է որ քու վշտերդ մտի. թարեւու եկած եմ. և երկուքնիս՝ քնոյ մէջ ընկղմած Հայաստանին վրայ իրեն պահապան ոգւոյն պէս հսկած ենք:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Կը սիրեմ հայրդ Սանդուխտ...: Գիտես ինչ է հայր մը:

ՍԱՆԴՈՒԻՑ. Ո՛հ Բնջ կ'ըսես հայր... եթէ զքեզ չսիրէի՝ զո՞վ կրնայի սիրել. սրտիս զգացմանցը վկայ ըլլան աս իմ արցունքներս. թագաւորի աղքիկ ըլլալու չեմ ուրախանար՝ այլ Սանատրկոյ: Երբ դու անձկաւ կաթոգին համբոյրներ ճակտիս վրայ կը դրոշմես՝ աւելի քաղցր և գեղեցիկ կ'երևայ

ինձի բնութիւնը, աւելի ակորժով կը սլանան շրթունքներէս սրտեռանդն աղօթքները...:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Դուստր իմ, ճշգրիտ պատկեր երջանկացեալ մօրդ:

ՍԱՆԴՈՒԻՑ. Այն գառն ժամէն 'ի վեր որ մայրս այս արտասուած հովտէն երջանկագոյն աշխարհքներ թռաւ, կրկնապատկեցաւ վրագ սէրս: Հայր ալ մայր ալ գուեա ինձի... բայց ո՛հ, գաղտնիք մը ունիս:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Դառն գաղտնիք զոր ըսել չեմ կրնար, և չըտեսն ալ անհնար է:

ՍԱՆԴՈՒԻՑ. Ի՞նչ է. նոր խռովութիւններ կան, պատերազմ, վտանգ... ուր որ ըլլաս պատրաստ եմ հեռոք գալու, որ գոնէ քովդ 'ի ծունր իջեալ՝ երկնից օգնութիւնը խնդրեմ քեզի համար:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Լսէ ուրեմն. զքեզ ամուսնացընելու միտք ունիմ... Երուանդ քաջ զօրավարէն 'ի զատ ալ արժանաւոր անձ մը չեմ գտնար քեզի:

ՍԱՆԴՈՒԻՑ. Հայր, կամքդ ըլլայ:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Հանգէսը անյապաղ պիտի կատարուի. արդէն ամէն բան պատրաստ է Աստուծոյ մեհեանը:

ՍԱՆԴՈՒԻՑ. (Մէկտի): Ո՛վ տէր... Աստուծոյ մեհեանը.

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ի՞նչ կը խորհիս Սանդուխտ:

ՍԱՆԴՈՒԻՑ. Հայր, զիս երկնից դժբաղդ ստեղծեցր են...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. (Մէկ): Կ'իմանամ տրտմութեանը պատճառը. բայց փութամամէն բան 'ի կարգի դնելու: (Բարձր) Պատրաստ լըր ուրեմն: (Մէկի):

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՍԱՆԴՈՒԻՑ

Գնա՛. երկնից պատգամները կատարուին... Գնա պատրաստ եմ սեղանը՝ և զոհը պատրաստ է. ո՞ր կողմը դառնամ... ո՞ւր ապաստանիմ... սէր՝ փառք՝ հայրենիք մեկդիէն զիս կը հրաւիրեն, մեկարէն Աստուած մը իր արիւնտութեամբ գրկերը կը տարածէ (Ծաղիկ խալ իւր հոն): Ո՛վ սիրելի մօր մը յիշա-

տակը՝ երկնային խաչ... ինձի անծանօթ Աստուած՝ զոր վըշտերուն համար սիրած եմ. երբոր իմ մայրս յաւիտենակա նութեան գուռը հասած էր՝ չգտնելով ուրիշ սիրոյ նշան մը, զքեզ տուաւ ինձի քու վրադ իր յետին համբոյրն գրոշմելով... դու իմ սրտիս հետ այն ատենէն՝ ի վեր միացած, կը լսես անոր ամէն բաբախմունքը... ո՛հ, քանի անգամ քու սրբա նուէր ոտքերդ իմ արցունքովս թրջեցի. հիմայ որ ալ չեն բաւեր բոլոր աշխարհային յոյսերը հոգիս մխիթարել, ո՛հ դու ինձի քու աստուածային թւերդ բաց, հոն ապաւինիմ ինչ պէս մատաղ տղայ մը որ աչքերը վախէն գոցելով՝ մօրը գիրկը կը վաղէ... հոն իմ հոգնած և բազմավիշտ ճակատս հանգ չեցընեմ... Բայց հոս արիութիւն պէտք է... հապա ջորացուր երկինք իմ բազուկս... խրախուսէ սիրտս. իմն ըլլայ յազմա նակը, և քեզի փառքը: (Երեւէ Կապէ):

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՆՈՅՆ ԵՒ ԹԱԴԵՈՍ

ԹԱԴԵՈՍ. Կեցիր, ո՛ւր կը գիմեա՝ Հայոց Թագուհի:

ՍԱՆԴՈՒԻՍ. Աստղեան տաճարը, սիրոյ զոհ մը մատուցանելու:

ԹԱԴԵՈՍ. Ո՛հ տէր, մոռցա՞ր որ քրիստոնեայ ես:

ՍԱՆԴՈՒԻՍ. Պիտի երթամ աստուածները և իրենց մեհեանները կործանելով՝ այն աւերակաց վրայ Աստուծոյ զոհ ըլլալ:

ԹԱԴԵՈՍ. Եւ չեմ տեսներ որ չորս կողմանէդ ահաւոր վրտանդներ կան:

ՍԱՆԴՈՒԻՍ. Թող սպառնայ աշխարհք. անվեհեր կը դիմեմ ես. Աստուած մը հետս է:

ԹԱԴԵՈՍ. Փորձու՞թեանց համբերէ՛ բայց ինքզինքդ մէջը մի նետեր:

ՍԱՆԴՈՒԻՍ. Թող երթամ ցուցընեմ թէ քրիստոնեայ կոյս մը իրենց ամէն աստուածներէն հզօր է:

ԹԱԴԵՈՍ. Բայց մահը քեզի հոն կը սպասէ:

ՍԱՆԴՈՒԻՍ. Ամէնքնիս ալ մեռնինք պիտի, բայց գեղեցիկ մահ մը գտնել չենք կրնար ամենքնիս:

ԹԱԴԻՈՍ. Ինչ որ թեթեւ կ'երևայ հեռուստ, ահաւոր է մօտէն :

ՍԱՆԴՈՒԻՑ. Ոչ ոք կրնայ արգիլել սիրտ մը զոր Աստուած կը դրդէ :

ԹԱԴԻՈՍ. Հայոց թագուհի, երկինք պատրաստեր են քեզի յաղթուածեան պսակը. փութանք. երջանկութեան ժամը հասաւ... խաչը ձեռուընիս փութանք արեան ասպարէզը, մէկտեղ յաղթանակելու կամ մեռնելու :

ՍԱՆԴՈՒԻՑ. Զիս մինակ թող սուրբ ծերունի. եթէ հետս դաս՝ հայրս վըագ թափէ պիտի իր բարկութիւնը :

ԹԱԴԻՈՍ. Ո՛վ Տէր... պիտի հասնէ՞ ուրեմն տեսնելու որ սէրդ կը զօրացընէ տկար կոյսերն անգամ մահուընէ չվախնալու. ուրախ եմ. թող ես ալ՝ ես ալ թող մեռնիմ :

ՍԱՆԴՈՒԻՑ. (Աղփայ Բիբիայ) Կը լսե՞ս ուրախական աղաղակները... Ինձի համար են... Հայր սուրբ՝ օրհնէ զիս և ողջամբ մնա... ահա փորձութեանց ժամը հասաւ... դառնութեանց բաժակը ձեռքս է... ո՛հ աղաչէ Աստուծոյ որ զօրացընէ զիս... (Կը հեռանայ) :

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՇԱԽԱՐԵ, ՍԱՆԱՏՐՈՒԿ

ՇԱԽԱՐԵ. Զուարթ ձայներով կը թնդայ այս երջանիկ օրը. այո՛ Տէր՝ վասն զի Հայաստան իրեն ազատարարին աղջիկը հարսանեկան առագաղաթը մերձենալ կը տեսնէ : Կը վառին Հիմնեան ջահերը. ուրախութեամբ կը զեղու ամէն սիրտ : Ամէնքն այս օր ուրախ են, Տէր արքայ, իսկ քու արտմուծիւնդ ինչէն է :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ես ալ ուրախ եմ Շաւարշ, այո՛ երջանիկ

եմ... Բայց ինչո՞ւ կ'ուշանան պատգամաւորները զմեզ մեհեանը հրաւիրելու :

ՇԱԽԱՐԵ. Թագաւորաւայել հարսանեաց պատրաստութիւնները միշտ սովորականէն աւելի ժամանակ կը պահանջեն : Այն վայրկեանէն առաջ որ յաւիտեան զիրենք միացունէ պիտի՝ դող մը կը զգան սիրականք. և որչափ մարգ երջանկութեան կը բաղձայ՝ չեմ գիտեր ինչպիսի բնազդմամբ երբոր երջանկութեան կը մօտենայ՝ գողգողալով անոր ծոցը կ'երթայ :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Սարսափելի գաղափար մը կը խռովէ զիս. քանի որ Սանդուխտ հարսանեկան պատմութեանները կը հագնէր՝ աչքէն գաղտնի արցունքներ կը սահէին :

ՇԱԽԱՐԵ. Ինքնայորգոր կը վազեն արցունք ամենէն երջանիկ վայրկեաններու մէջ ալ. կամ անցեալ վշակերուն հետքերը ջնջելու համար կամ նորերուն երկիւղէն :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ճշմարիտ են խօսքերդ՝ բայց իմ սիրտս ահաւոր տագնապներու մէջ կ'ալէկոծի. յուսոյ և երկիւղի մէջ կը ծփամ... ո՛հ ինչո՞ւ այնչափ կը սիրեմ աղքիկս, կամ ինչո՞ւ իր սիրածներն ալ չեմ կրնար սիրել, ինչո՞ւ իր աստուածը կ'ատեմ : Արդեօք այն արիւնները որ թափեր եմ՝ ինձմէ վրէժ կը խնդրեն, կամ թէ թագաւորի յանցանք է հայր ըլլալ :

ՇԱԽԱՐԵ. Արգարութիւնը և իմաստութիւնը թագաւորներուն գահակից ըլլան պիտի, և մնացածը Աստուածք կը հոգան :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Բայց ե՞րբ :

ՇԱԽԱՐԵ. Իրենք գիտեն :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ատելի է ինձ լոյսը. երբոր աչքերս 'ի քուն փակուին՝ կապուտ ձեռք մը կարծես հոգւոյս վրայ կ'իջնայ, և եղերական ձայն մը ականջէս մահուան երգեր կը թնդացնէ : Յետոյ կարծես թեթեւ թւերով աղքիկս ինձմէ կը փախչի և կը թողու իմ հոգիս՝ ամայի ծովեզերքի մը ալէս յորում փրփրալով կոճաւն ծովըր փշրի : Հայր թշուառ... աղքիկս ազատեցէք ո՛վ աստուածք :

ՇԱԽԱՐԵ. Ահա շտապաւ պատգամաւոր մը կուգայ գէպ 'ի մեզ :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Տխուր նախազգացմունք մը զիս կը խռովէ, ինչո՞ւ այդպէս թալկադէմ է :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆ

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ի՞նչ լուր կը բերես ինձի, վահրամ...

ՎԱՀՐԱՄ. Տէր արքայ...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Արդարացի էր երկիւղս... խօսէ... կատարուեցա՛ն հանդէսը.

ՎԱՀՐԱՄ. Այո... բայց...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Խօսէ, մահուան վճիռ ալ ըլլայ խօսէ...

ՎԱՀՐԱՄ. Ըստ քու հրամանիդ ամէն բան կարգադրելէն վերջը՝ ահա Սանդուխտ և Երուանդ ձեռք ձեռքի տուած կը մօտենային: Արամազդայ տաճարին գմբէթը՝ նման աստեղազարդ գիշերուան մը՝ բիւրաւոր լոյսերով կը շողջողար... աս. դիես զօրականք, անդիէն ժողովուրդք անհամբեր կը սպասէին. քահանայապետը նուիրական աղօթքները կը մըմնջէր. կոյսը՝ որ վերէն ՚ի վար ճերմակներ հագուած և ճակատը ծաղիկներով զարդարած, աւելի աստուածուհւոյ մը կը նմանէր. քան թէ մահկանացուի, ծիծաղ շրթունքով առաջ եկաւ և քահանայապետին՝ որ կը սկըսէր աղօթքները մատուցանել, « Կեցիր » ըսաւ. և գառնալով Երուանդին գոչեց. « Կը խոստանաս ինձի հաւատարմութիւն »:

Երիտասարդը զարհուրած ապշած այսպիսի հարցման վերայ՝ շառագունած երեսը կը նայէր. « Ահա մօտեցաւ վայրկեանը, աւելցուց օրիորդը, այն վայրկեանը՝ ո՛հ իմ Երուանդս՝ որ յաւիտեան միանանք պիտի կամ յաւիտեան զատուինք »: Աս ըսելով առաջ անցաւ, և աստուածոց երեսն ՚ի վեր գոչեց. « Փայտէ և քարէ աստուածներ, այսչափ մարդիկներ խաբէրիդ չբաւէց, ու դեռ կը յանդգնէք Ճմարտին Աստուծոյ երկրպագուները հրապուրել. ինկէք, կործանեցէք և ձեր աւերակներուն վրայ Ճմարտին Աստուծոյ սեղանը կանգնեմ »: Ինչպէս երկրաշարժի մը ռտեն լեռները իրենց հիմունքներէն կը գողան՝ այնպէս կ'երերային մեր Աստուածները՝ ինչուան որ կործանեցան ու փշրեցան... Սանդուխտ զուարթութեամբ Երուանդին ձեռքէն բռնած առաջ կ'երթար... բայց զայրագին ամբոխը և զօրականք մոլեկան աղա-

ղականերով իրար անցած կ'ուզէին ամպարիշտը սպաննել: Ինչպէս բուռն հեղեղ մը բարձր ժայռէ անդնդի մը մէջ գահավիժելով զայրագին կատաղութեամբ ալիք ալիքի կը խառնէ՝ կը դառնայ՝ կը փրփրի՝ կը շառաչէ, այսպէս ամբոխը տաճարին մէջ, որ արեանց ասպարէզ դարձեր էր: Կը շողան սուրերը օդին մէջ, վահան վահանի բախելով ահագին ճայթմունքներ կը գործեն. մայրը իր որդին կը խնդրէ հերարձակ. տղան արտասուաբոց մայրը կը կանչէ, ամուսին ամուսնի անուն տալով կը խնդրեն մէկզմէկ. վրէժխնդրութեան ցասման՝ ողբոց տղաղակք կը թնդացընեն մեհեանին գմբէթը. բայց Երուանդ կայծակի պէս ամբոխին մէջէն սլանալով վահան կ'ընէ իւր մարմինը անձկալի կուսին. « Կեցէք, կը կանչէ, յիշեցէք որ Սանդուխտը Սանտրկոյ աղջիկն է... ես եմ յանցաւոր ես... և եթէ ձեր կատաղութեանը զոհ մը կ'ուզէք, ահա ես կամ: Բայց ամբոխը ոչ միայն չէր խաղաղեր՝ այլ ևս քան զէս զայրանալով երկուքն ալ խողխողել կ'ուզէին: . . Ահա զէնքերուն շառաչիւնը ասկից ալ կը լսուի... փութա՛, տէր արքայ, օրիորդդ ազատելու: »

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Աս վերջի հարուածը պատրաստեր էիր քու հօրդ՝ ամբարիշտ օրիորդ. անօրէն սուր՝ շատ հանգչեցար քու պատեանիդ մէջ... ո՛վ Աստուածներ, զօրացուցէք զիս որ ձեր վրէժը լուծեմ...

ՇԱԽԱՐԵ. Կեցիր տէր արքայ... յիշէ... Սանդուխտն է. հայր ես...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Սրտիս մէջ մ'արթնցըներ բնութեան ձայները. (Ելլայ):

ՇԱԽԱՐԵ. Աստուածք հաշտ են քեզի հետ... աղջիկդ պահէ... այլ չանուար ինձի... ո՛հ ինչ շուտով մարդուս երջանկութիւնը 'ի վիշտ կը փոխուի... փութամ զինքը համոզելու՝ խաղաղելու (Մէկի):

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՍԱՆԴՈՒԻՏ (հեբարէսէ վաշտալ):

Մոլեկան ամբոխ՝ կեցէք. այն ծարաւի զէնքերնիդ որ օդին մէջ կը շողան՝ իմ արեամբս յագեցընեմ պիտի... Ո՛հ

ինչ վիճակի մէջ եմ. կրօնամոլ ամբոխ մը զիս կը փնտռէ... ոտքիս տակ կործանեալ աստուածները կը մռնչեն. սպառնալից սուրեր գլխուս վրայ կը շողան:... Սանդուխտը մինակ է... ո՛հ չէ... գթած հրեշտակ մը իր հրեղէն թւերուն վրայ հառաչանքներս Ամենակալին ոտքը կը տանի... իսկ հայրս... արդեօք այս դէպքը միտքը բանայ պիտի՝ թէ աւելի զայրացընէ... դա՛ռն կասկած՝ ամեն ցաւերէ սարսափելի, բաւական սիրտս կեղեքեցիր... երթամ նայիմ ո՞ւր է: (Երկուտ ափէն)

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՆՈՅՆ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ

ԵՐՈՒԱՆԴ. (Մերէ սրտն էր ինչ վաղէ)։ Ո՛հ, յաղթեցի վերջապէս... վերջապէս դու ազատ ես:

ՏԱՆԴՈՒԽՑ. Ո՛վ տէր... ինչ կատաղութիւն կը փայլատակէ աչքերուդ մէջ... արդեօք իմ սէրս զքեզ ամբարձրտ դարձուց. ուրեմն այն որ դրկացս մէջ է՝ ուխտագրութ մը՝ ապստամբ մընէ. այդ արիւնը որ կը կաթի սուրէգ՝ ո՞ւմ է...

ԵՐՈՒԱՆԴ. Կենացդ գէմ դաւաճանողներուն... հապա... փութա՛, փախչի՛ր...

ՏԱՆԴՈՒԽՑ. Ոչ... մահը զիս չսարսափեցընէր՝ այլ յանցանքը. և երկու չարեաց մէջէն՝ լաւ է ինձ անմեղ կորսնցընել զքեզ քան վրիժապարտ փրկել... (Կռուք էրկու) :

ԵՐՈՒԱՆԴ. Ո՛վ թշուառ... չէս տեսներ ի՛նչ թշնամիներ՝ ի՛նչ վտանգներ կան չորս կողմդ... ո՞ւր կը գիմես...

ՏԱՆԴՈՒԽՑ. Մահուան...

ԵՐՈՒԱՆԴ. Զես կրնար քու հաճոյիցդ համեմատ գործածել կեանք մը՝ որ ուրիշի հետ կասլուած է:

ՏԱՆԴՈՒԽՑ. Առաջին պարտքը կրօնքն է:

ԵՐՈՒԱՆԴ. Եւ ո՞ր անողորմ կրօնքը կը սորվեցընէ քեզի թողուլ ամուսին մը՝ առանց իրեն յետին ողջոյն մը տալու:

ՏԱՆԴՈՒԽՑ. Հետո եկուր ուրեմն:

ԵՐՈՒԱՆԴ. Ո՞ւմ ապաւինած:

ՏԱՆԴՈՒԽՑ. Աստուծոյս:

ԵՐՈՒԱՆԴ. Ո՛հ... գնա Աստուծոյդ... յաւիտեան կը բաժնուի՛նք իրարմէ... ողջամբ մնա...

ՍԱՆԴՈՒԻՑ. Զօրացուր զիս Աստուած իմ. . դեռ արտա-
սուք չարքեցին սրտէս իր. պատկերը՝ զոր սէրը հոն գրողմեց:

ԵՐՈՒԱՆԴ. Այո, մոռցիր զայն որ թշուառութիւնը միայն
օժիտբերաւ քեզի. . բայց գիտցիր. . թէ ինքն զքեզ կը պաշտէ:

ՍԱՆԴՈՒԻՑ. Ո՛հ լռէ . . .

ԵՐՈՒԱՆԴ. Թէ դու ազատ ես. .

ՍԱՆԴՈՒԻՑ. Ո՛վ երկինք. . .

ԵՐՈՒԱՆԴ. Եւ թէ ինքը քու տեղդ կը մեռնի (Մէքի):

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՍԱՆԴՈՒԻՑ ԵՒ ՇԱԽԱՐԵ

ՍԱՆԴՈՒԻՑ. Ո՛ւր կ'երթաս. . . լուր ինձ Երուանդ:

ՇԱԽԱՐԵ. (Մփնէւ) Ինչո՞ւ խռովեր ես, թագուհի:

ՍԱՆԴՈՒԻՑ. Ահա Երուանդ մեռնելու կ'երթայ:

ՇԱԽԱՐԵ. Մի վախնար:

ՍԱՆԴՈՒԻՑ. Ի՞նչպէս. . . ո՞չ ապաքէն ինքը ապստամբու-
թեան գրդեց հիմայ բոլոր ժողովուրդը:

ՇԱԽԱՐԵ. Այո. . բայց որովհետեւ ինքը մեր թագաւորին
կեանքը ազատեց, ներումն շնորհուեցաւ իրեն. . .

ՍԱՆԴՈՒԻՑ. Ո՛վ ուրախութիւն. . .

ՇԱԽԱՐԵ. Բայց լուր եկաւ թէ թշնամիք պաշարեր են մեր
քաղաքը. և հոն վճռուեցաւ որ երթայ Երուանդ պատե-
րազմելու:

ՍԱՆԴՈՒԻՑ. Գոնէ մէկ անգամ մ'ալ պիտի չկարենամ տես-
նել զինքը:

ՇԱԽԱՐԵ. Այո. ահա կուգայ. . (Մէքի):

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՍԱՆԴՈՒԻՑ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ

ԵՐՈՒԱՆԴ. Քու ջրթուներէդ լսեցի իմ անունս:

ՍԱՆԴՈՒԻՑ. Երուանդ Երուանդ, ինչո՞ւ կը չարչարես
Սանդուխտը:

ԵՐՈՒԱՆԴ. Սանդուխտ, քեզի համար անթիւ վտանգնե-
րու կը գիմագրաւեիմ, և դու զիս կը մերժես:

ՍԱՆԴՈՒԽՑ. Զքեզ... ո՛հ որովհետև հասաւ վերջին վայր-
կեանն յորում իմ և քու մէջդ գերեզման մը անջրպետ պի-
տի ըլլայ՝ գիտցիր որ Սանդըխտոյ բոլոր մանկութեան երազ-
ներն ու իղձը դուն ես. և հիմայ ոչ եթէ զքեզ նուազ կը սի-
րէ, այլ իր Աստուածը քեզմէ աւելի...

ԵՐՈՒԱՆԴ. Ո՛վ քաղցր բարբառ... ո՛հ երջանիկ վայր-
կեան...

ՍԱՆԴՈՒԽՑ. Բայց մի մերձենար անոր... գիտցիր թէ ինքը
ծաղիկ մըն է որ խաչին ոտքը պէտք է թողմի... հաշտու-
թեան զո՛հ մը երկնից և վրիժաւարտ Հայաստանին մէջ։
Գնա՛ փութա յաղթութեանց դաշտը... իմ արտասուքս և
թերևս արիւնս 'ի գութ շարժեն զերկինս քու վրադ...
Բայց երբ փառօք դառնաս՝ ոչ այլ ինչ պիտի տեսնես Սան-
դուխտէդ, եթէ ոչ գերեզման մը խոնարհ խաչի մը ստուերին
տակ...

ԵՐՈՒԱՆԴ. Ինչո՞ւ այդպիսի տխուր մտածմունքներով կը
խառվիս։

ՍԱՆԴՈՒԽՑ. Այսչափ դարուց ամբարշտութիւնը գրգռեց
երկնից ցասումը. այն վրէժխնդիր կայծակը որ Հայաստա-
նեայց կը սպառնայ՝ արեանս մէջ մարի... Բայց դու լսէ իմ
վերջին խնդիրս։

ԵՐՈՒԱՆԴ. Խօսէ՛, յայտնէ ինձի։

ՍԱՆԴՈՒԽՑ. Երբոր մեռնիմ ես, ո՛վ Երուանդ, և սև հոլերը
ղիս ծածկեն, երբ յաղթական դաշտէն դառնաս, ո՛հ դու սոցոյ
մէջ մի մտնար։ Առանձին իմ գերեզմանս եկուր իմ վրաս
մտածելու. և վարդերով ու յաղթական դափնիովդ իմ շի-
րիմս զարդարէ, յիշելով որ ես արդէն երկնային ընտրեալ
ոգիներուն մէջ անձկաւ քեզի կը սպասեմ։

ԵՐՈՒԱՆԴ. Եւ դու կը կարծես որ ես ապրիմ երբոր զըր-
կուիմ անձկալի տեսութենէդ, երբոր ալ չլսեմ ձայնդ, եր-
բոր աչքերուդ մէջ չիջանին իմ հոգիս սնուցանող բոցերը...
Քու սիրտդ՝ որ այնչափ անգամ բաբախեց ինձի համար՝ ալ
պիտի չխնդրէ՞ զիս։ Արդեօք երկնային գաւառներուն մէջ
չթուներներդ ալ պիտի չկրկնեն այն անունը զոր երկրիս
վրայ երբեք չէիր մոռնար աղօթքներուդ մէջ...

ՍԱՆԴՈՒԽՑ. Զերծ աշխարհիս կապանքներէն, երկնից տն-
մահական վայելքներուն մէջ քեզի պիտի մտածեմ, և ան-

Թառամ ծաղիկներով երկնից դաշտերուն վրայ քու անունդ պիտի հիւսեմ :

ԵՐՈՒԱՆԻ • Ո՛հ, ինչպէս պիտի ճանչնամ զքեզ երկնաւոր դաւառներուն մէջ, եթէ դու թողլով այս մահացու գեղա-ծիծաղ-քողդ՝ պիտի բարձրանաս՝ ոգի՛ ամբիժ և անարատ՝ լուսոյ դաւառները . աւելի սուրբ պիտի ըլլայ արդեօք հոն քու ժպիտդ . Թէ աւելի քաղցր պիտի իջնան ոգւոյս վրայ քու խօսքերդ : Ո՛հ, հոն անշուշտ պիտի մոռնաս այս արտասուաց հովիւար, և ալ պիտի չյիշես քու խոստմունքներդ այն օրուան յորում երջանիկ ըրիր զիս քու սէրդ յայանելով, և թըշուառ՝ զրկելով զիս անկէ :

ՍԱՆԴՈՒԽՅՑ • Աւելի սուրբ պիտի ըլլայ երկնից մէջ՝ բայց ոչ չինչ նուազ եռանդուն մեր սէրը :

ԵՐՈՒԱՆԻ • (Ձայն Խփիայ) Կը լսեմ այս մարտագող աղմուկը .. հայրենիք զիս 'ի պատերազմ կը հրաւիրեն . կ'երթամ ահա .. բայց ուր ալ ըլլանք՝ արդէն հոգիներս միացած է :

ՍԱՆԴՈՒԽՅՑ • Ողջմբ գնա (Ագաթանգ) :

ԵՐՈՒԱՆԻ • Սանդուխա՛, դու որ մահուան վտանգներուն մէջէն աներկիւղ անցար՝ դու կ'արտասուէս հիմայ :

ՍԱՆԴՈՒԽՅՑ • Ողջմբ գնա, Երուանդ . ալ մի՛ փորձեր իմ առաքինութիւնս :

ԵՐՈՒԱՆԻ • Յուսա՛, մի՛ այդչափ արտաւիր՝ սիրեցեալդ իմ . եթէ երկնից մէջ գրուած է որ մեռնիմ, մեռնիլ հարկ է ինձ, և ես բնաւ չեմ գանգաւոր : Բայց եթէ ճակատագիրս այս չէ՝ մի՛ վախնար . ամէն վտանգի յաղթելով պիտի դառնամ և քու ճակատիդ վրայ պիտի հիւսեմ իմ մրտենիներս .. մի՛ լար .. ո՛հ մի՛ . ինձի ալ ինայէ : Անշուշտ Աստուած մը կը գթայ մեզի ալ . եթէ բոլոր աշխարհս երկուքնուս դէմ զինուի՝ և յաղթէ մեզի, մեր անշունչ դիակները գիրկնդխառն պիտի գտնէ իր փշրած զինուոյր տակ :

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ

ԱՐԱՐՈՒ ԱԾ Դ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՍԱՆԱՏՐՈՒԿ

(Խորհելով իւր բանը) Վերջապէս խաղաղութիւնը տիրեց այս արքունեաց մէջ. բայց այս խաղաղութիւնը՝ աւելի ահաւոր մրրիկներ կը սպառնայ։ Ո՛վ դիք, ես հայր եմ... գթութիւն... գթութիւն... եթէ ձեր բարկութեան սուրն էի՝ փշթեցէք զիս... իմ աւերակներովս գոցեցէք այն անգունդը որ ոտքիս տակ կը բացուի... Ինչո՞ւ կ'ուզէք իմ Սանգուխտս։ Երբ աչքս կենացս ասպարիդին վրայ կը դարձնեմ՝ աւերակ միայն կը տեսնեմ... անոնց վրայ ձեր գթութիւնը ծաղիկ մը միայն նետեց՝ իմ աջիկս... Ինչո՞ւ չէք ուզեր որ գոնէ գերեզմանիս ահարկու ստուերին տակ՝ ինքը արտասուածքից հրեշտակի՝ մը նման՝ հսկելով և աղօթելով հաշտեցընէ աստուածները։.... Ո՛վ զարհուրելի էակ՝ որուն նայուածքը այս տիեզերքս ստեղծեց, չբաւեց քեզի յաւիտենական երջանկութիւնդ, և տարօրինակ հաճոյքի մը համար՝ արտասուք՝ հաւաքանք՝ վիշտ՝ յուսահատութիւն տեսնելու՝ ստեղծեցիր թշուառ մահկանացուն, որուն չափաւոր միտքը աստեղաց վրայ քու հեպքերդ տեսնելով հոն կը գիմէ գքեզ դանելու... Բայց զարհուրած քու անսահման մեծութենէդ՝ որ երազի մը պէս անդադար իր առջևէն կը հեռանայ՝ վաստակաբեկ կ'իյնայ գերեզմանին մէջ... Բայց ոչ... դու անշուշտ գթած ես... արիւն լուայ աստուած մը գրկերէս յափշտակել կ'ուզէ զՍանգուխտ։ Բայց ես, ո՛հ ես այո՝ այն աստուծոյն հետ պիտի պատերազմիմ... երկուքներնէս մէկը պիտի յաղթէ... և իր կայծակունքը կիսով չափ պիտի այրեն իմ ճակատուս մրտենիները... և եթէ պիտի յաղթուի Սանատրուկ, Աստուած մը միայն թող յաղթած ըլլայ իրեն...

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՇԱԽԱՐԵ ԵՒ ՍԱՆԱՏՐՈՒԿ

ՇԱԽԱՐԵ. Ինչո՞ւ է այսչափ տրամուծիւնդ, տէր արքայ: Հայաստան քեզմով իր առջի փառքը վերստացած՝ չգիտէր ինչպէս փոխարինէ. ահուգողի մէջ կան չորս կողմի ազգերը, թագաւորական գահգ ահա քեզի նեցուկ է, և քու շէնքերդ բաւական են՝ իրենց լռին և ամայի աւերակացը մէջ ալ քու անուկդ ապագայ դարերուն աւանդել:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Շաւարշ, թերևս զարմանաւ ըսածիս, այս աշխարհիս վրայ չկայ Սանատրիոյ հանգստեան բարձ մը. Բնչ է յալթական փողերուն ղուարթ գոչիւնը. Բնչ ընեմ գերի գարձած աշխարհի մը շղթաներուն շառագիւնը, Բնչ քաղցրութիւն ունին փառք, անմահութիւն՝ երբ չկայ անոնց մէջ Սանդխտիս՝ իմ սիրելի աղջկանս անուշ ծիծաղը... Ո՛հ, Բնչ կ'ըսեմ. Սանդուխտ ա՛լ իմս չէ...

ՇԱԽԱՐԵ. Երկինք՝ որոնց սիրտդ ու սուրդնուիրած ես, երկինք՝ որուն պատգամացը հաւատարիմ պաշտօնեայն ես, երկինքը՝ որ վարձքը կ'ուշացընէ բայց չմոռնար, երկինք կ'ըսեմ վերջապէս պիտի հառուցանեն արժանի փոխարէն մը: Մի՛ յուսահատիր. առ քեզ կոչէ զՍանդուխտ. հօր մը ձայնը միշտ սրտին կը դպչի՝ թէպէտ քարացեալ ըլլայ. ո՛րչափ աւելի Սանդխտի պէս փափուկ օրիորդի մը՝ որուն շրթուէքը ինչուան հիմայ միայն սէր հնչած են: Սպառնա, աղերսէ. մէկ գիէն գերեզմանին պաղ գիրկը՝ մէկալէն հայրական սէրը կշեռքի գիր. վերջապէս ինչ որ սիրտդ կ'ազդէ՝ ըրէ...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այո՛. ողբեմ աղերսեմ. մոռնամ հայր և թագաւոր ըլլալս. թերևս Սատուած մը 'ի գութ շարժէ Սանդխտոյ՝ սիրաւ իր հօրը վրայ... բայց այս Բնչ աղմուկ է...

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԻ

ՇԱԽԱՐԵ. Տէր արքայ, Ժողովուրդն է որ խուռն բազմու. թեամբ արքունեաց սրահները կ'ողողէ:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Բացուին դռները:

ՇԱԽԱՐՇ. Ի՞նչ կը խնդրէք Հայոց ժողովուրդ:

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Արդարու թիւն..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Թշուա՞հ հայր ..

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Վրէժ..

ՇԱԽԱՐՇ. Յիշեցէք որ ձեր թագաւորին աղջիկն է..

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Արիւն..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ա՛լ բաւական է.. հեռացէ՛ք..

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Կեցցեն դիք պահապանը.. մահ՛ ամբարշտին..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Աղմուկներով պիտի դողացընէք Սանատ-
րուկը.. հեռացէ՛ք.. և թող ձեր տեղը խօսի Քրմապետը:

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Տէր արքայ, յարգէ կրօնքը՝ եթէ հայրենիքդ
կը սիրես: (Կը հեռանան):

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՔՐՄԱՊԵՏ, ՍԱՆԱՏՐՈՒԿ ԵՒ ՇԱԽԱՐՇ

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Յառաջ մատիր, ծերունի:

ՔՐՄԱՊԵՏ. Այս մահացու քողին տակ, որ զիս կը ծածկէ,
լսէ թէ ի՞նչ կը հրամայէ քեզի կրօնքը:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Միշտ մեծարեցի Աստուածները:

ՔՐՄԱՊԵՏ. Պարտքդ կատարեցիր. առանց անոնց ի՞նչ ես:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Պատկառելի ըրի անոնց անունը. հիմայ ահա
բեկ՝ անոնց օգնութիւնը կը խնդրեմ:

ՔՐՄԱՊԵՏ. Գիտես անշուշտ թէ ի՞նչ բանի համար եկայ
հոս...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Իմ աղջիկս...

ՔՐՄԱՊԵՏ. Քու Աստուածներդ...:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Աւա՛ղ... գոնէ ջնջէ իմ սրտէս իր պատկերը...

ՔՐՄԱՊԵՏ. Սրբապիղծ է նա...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այո, յանցաւոր է:

ՔՐՄԱՊԵՏ. Դու ինքնին կը գատապարտես զայն...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ի՞նչ պէտք որ ընեմ...

ՔՐՄԱՊԵՏ. Ինչ որ հայրենիք, ինչ որ Աստուածք կը պա-
հանջեն քեզմէ...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Խօսէ ուրեմն.. ի՞նչ...

ՔՐՄԱՊԵՏ. Սպաննեն գինքը...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Թշուառ... Սանատրուկին հետ կը խօսիս...

ՔՐՄԱՊԵՏ. Եւ Աստուած մը իմ բերնէս Սանատրուկին կը պատասխանէ. մոռթ գրերով նախատինքը ճակատուդ վըայ գրուած է. իր արեամբը միայն կրնաս զայն ջնջել...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ահաւոր մըրիկ մը յուզեցաւ սրտիս մէջ... արդէն սպառնալից կայծակը իր գլխուն վըայ կ'որոտար... երբոր գինքը ժպտել տեսայ՝ սուրը ձեռքէս ինկաւ՝ և արցունքներ սահեցան աչքէս...

ՔՐՄԱՊԵՏ. Նախատէ գիւցազն հայերդ. ոտնակոխ ըրէ Աստուածներդ, և թող որ յաղթական աղջիկ մը անոնց աւերակներուն վըայ կանգնէ խաչելոյն ատելի նշանը...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ահաւոր զարհուրելի պատկեր...

ՔՐՄԱՊԵՏ. Արեւը չմտած պէտք է որ Սանդուխտ թողու զաշխարհ...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛հ... այսպիսի զոհ չեն կրնար խնդրել Աստուածք հօրմէ մը:

ՔՐՄԱՊԵՏ. Մի ջանար Աստուածոց խորհուրդներուն մէջ թափանցել:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Իսկ Հայաստան...

ՔՐՄԱՊԵՏ. Ծափ պիտի զարնէ քեզի:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Աշխարհա...

ՔՐՄԱՊԵՏ. Պիտի լռէ:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Եւ երբոր երկինք և երկիր կշտանան աղջը. կանս արեամբը, ի՞նչ կը մնայ Սանատկոյ...

ՔՐՄԱՊԵՏ. Գերեզման մը... որուն քով պիտի բազմի Արդարութիւնը մահուան նոճիներով պսակուած:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Անողորմ ճակատագիր:

ՔՐՄԱՊԵՏ. Աշխարհիս օրինակ տալու համար՝ յաճախ Արամաղդ իր կայծակները բարձրաբերձ արքունեաց վըայ կ'արձկէ: Արդ ես զքեզ կը թողում... բայց ոչ եթէ առանձին... հետք է անողորմ խիղճը և արիւնշաղախ Վրէժխնդրութիւնը, որ հիմայ բոլոր տիեզերաց մէջէն թռչելով կրկին ձեռքերովը կը մ' թընցնէ երկինքը, և կատաղութիւն կը շնչէ ամէն Հայկազն սրտերու մէջ (ՄԵՒԻ):

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՑ

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ա՞յս վիճակիս մէջ տեսնար պիտի զքեզ հայրդ՝ Սանդուխտ...

ՍԱՆԴՈՒԽՑ. Հայր, աղէտք զիս կը չարչարեն, բայց դեռ չեն ընկճած:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛հ, մի՛ զարթուցաներ մտացա մէջ յանցաւնացդ յիշատակը. եթէ անոնց չեմ կրնար ներել՝ գոնէ մոռնամ զանոնք: Տեսա՞ր ինչպիսի վտանգներ կան մեր չորս կողմը:

ՍԱՆԴՈՒԽՑ. Թէ որ ես զքեզ վտանգի մէջ կը դնեմ, քու փրկուածեանդ համար պատրաստ եմ կեանքս զոհելու:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛հ, այո՛ Սանդուխտս, կը տեսնեմ որ դու իմ արիւնս ես դեռ... չէ. որք չթողուցին զիս երկնք. . հիւ մայ թող գան յափշտակելու ինձմէ այս գահը և այս պսակը. լաւ է ինձ քեզմով երջանիկ հայր ըլլալ՝ քան թէ առանց քեզի միահեծան թագաւոր:

ՍԱՆԴՈՒԽՑ. Միշտ քուկդ եմ ես հայր իմ...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Բայց ի՞նչ են գաղտնիքներդ... Ինչո՞ւ հորմէդ կը ծածկուիս: Փանի որ այս նոր աղանդը ճանչցար՝ միշտ տըխուր՝ միշտ արտասուածք մէջ ես... Ո՛ւր է իմ առջի Սանդուխտս, ո՞ւր է այն անմեղ տատրակը որ քայլերուս կը հետեւէր և որուն միտքը ուրիշ տապալելներ չէր փնտռեր՝ բայց իր հօրը և մօրը գիրկը... ո՛հ, ան անձկալի վայրկեանները ո՞ւր են: Դեռ կարծես աչքիս դիմացն է որ պզտիկ էիր և գլուխդ ծաղիկներով զարդարուած կ'առաջնորդէի զքեզ Արաւմազդայ մեհեանը: Մայրդ՝ որուն երեսը նայելով անմեղութեամբ կը ծիծաղէիր՝ զքեզ այնպէս տեսնելով զմայլած ինքիրմէ դուրս եր. դու ալ կը հարցընէիր ինձի անոյշ ձայնովդ. «Հայրիկ, ո՞ւր պիտի երթանք». երբոր մեհեանը հասանք զքեզ գիրկս առի, և «Ո՛վ հօր Արամազդ, կ'ըսէի, որուն վահանը Հայաստանի չորս կողմը տարածուած կը հովանաւորէ զայն, կոյսդ Անահիտ, և դու նազելե Աստղիկ որուն

Ժպիտը վարդեր կը թափթըմէ Հայոց հովիտներուն վըայ, լսեցէք հօր մը աղաչանացը, պահեցէք իմ աղջիկս, տեսնեմ զինքը մեծցած հասակով և առաքինութեամբ, և օր մը իմ ծերութեանս միտթարանքն ըլլայ)։ Իսկ դու զուարթ աչքերդ մէյմը ինձի մէյմը մօրդ դարձնելով ինչպէս թռչնիկ մը որ նոր ելած ըլլալով իր բոյնէն մէյմը ծննդեան տեղը կը նայի՝ մէյմըն ալ հեռուանց տեսնուած ծաղկափթիթ դաշտերուն՝ կարծես կը խոստանայիր ուխտս կատարել... ան, ան իմ Սանդուխտս հիմայ ուր է։

ՍԱՆԴՈՒԻԹՅՈՒՆՑ. Հայր իմ՝ անցելոյն քաղցր յիշատակները, հայրական գթութիւնդ, սիրտս կը ճմլեն. բայց քու սիրոյդ հետ՝ երկնաւոր ճշմարտութիւն մը զօրացած՝ բռնացած է իմ սրտիս վըայ. չափազանց լուսաւոր ծագած է մտացս մէջ հաւատոց լոյսը։

ՍԱՆԴՏՐՈՒԿ. Ո՛ր անօրէնը զքեզ խաբելով կը յափշտակէ ինձմէ և որբ կը թողու զիս աշխարհիս երեսը... արդեօք կարենամ պիտի գտնել այնչափ դառն մահ մը՝ որչափ դառն է այժմ հարուածը զոր սրտիս կ'իջեցնէ։ Գուտոր իմ, տես երակներուդ մէջ ի՞նչ արիւն կը վաղէ... անթիւ թագաւորաց արիւնն է, ամենքն ալ Արամազդայ հպատակ։... Աչքդ չորս կողմէ նետէ, Աստուածոց կայծակները գեռ կը ծխեն փախըստական թշնամեաց բանակներուն վըայ... ամէն տեղ իրենց հետքերը կան... բայց թէ որ բան մը սիրտդ չզգար՝ գէթ հօրդ խնայէ, իմ աղջիկս. բաւական վերքեր ունի իր սիրտը, մի՛ ուզեր քու ձեռքովդ ցաւ մըն ալ աւելցնել. ահա խուժանն ալ զայրացած՝ զքեզ կը խնդրէ սպաննելու համար... ան, գիտես ի՞նչ է հայր մը, աղջիկ. հայրը ի՞նչ է։

ՍԱՆԴՈՒԻԹՅՈՒՆՑ. Ինչո՞ւ կը փութաս Աստուածոց վրէժը դու լուծել, եթէ իրենք արդարեւ Աստուած են՝ թող աւերակներուն մէջէն բարձրացնեն իրենց նախատակած ճակատը, և ես խոնարհիմ անոնց դիմաց։

ՍԱՆԴՏՐՈՒԿ. Ինչո՞ւ այսչափ յամառ ես. ի՞նչ կը տեսնես գուտոր իմ այս նոր կրօնքիս մէջ. ինչուան հիմայ նոյն փառօք չէի՞ն ծագեր արեւը և աստղերը, նոյն զօրութիւնը և իմաստութիւնը չկա՞ր որ զերկինք և զերկիր կը կառավարէր. ի՞նչ Աստուած է այս պաշտածդ։

ՍԱՆԴՈՒԻԹՅՈՒՆՑ. Կը պաշտեմ այն Աստուածը որ զերկինս և

զերկիր ստեղծեց, և կը սիրեմ այն Աստուածը որ մարդկու-
թեան համար զոհ եղաւ:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ահա քու հայրդ, քու հայրդ իսկ, իմ սիրելի
Սանդուխտս, հազար վերքերով սրտին վրայ, յաղթութիւն-
ները փառքը առաթուր կոխած, արտասուեաց հեղեղներ թա-
փելով, ոտքդ կ'իյնայ, քեզմէ կեանք կը խնդրէ, կը զլանամ
իրեն... առ ուրեմն այս դաշոյնը որով հայրենեաց թշնամի-
ները ջնջեցի, առ և ծոցս մխէ. թերեւ գերեզմանին խորը
ամբարիշտ ձայնդ ալ զգայ հօրդ յաւիտենական խաղաղու-
թիւնը խռովելը. իսկ եթէ քիչ կ'երևայ քեզի ունեցած
փառքդ՝ զնոսիմ արշաւեմ. իմ սիրելի օրիորդս յաղթական
դրօշներուն հովանեացը տակ քնանայ, և հազար նուաճեալ
ազգերու երգերը զինքը որրեն: Յիշէ իմ նազելիս՝ յիշէ որ ես
այն եմ որ քեզի կեանք եմ տուեր. դուդողալով հսկած եմ
քու ամէն մէկ քայլիդ վրայ. առջի ծիծաղդ իմ երեսս եկած է,
ես սրբած եմ քու առջի արցունքդ. և երբոր աշխարհիս
մրդկայոյզ ալիքները՝ զէնքերուն շաշիւնը՝ ապագային տարա-
կոյսները՝ զիս վշտաց զարհուրելի անդունդը կը մղէին, զքեզ
իմ գիրկս առած կը սեղմէի և անմեղ ճերմակ ճակատիդ վրայ
նայելով՝ վարդագոյն շրթունքներդ համբուրելով իմ անձկու-
թիւններս կը մոռնայի, անապատացած հոգւոյս վրայ յուսոյ
ճառագայթ մը կը ծագէր: Աղբիկս, որք կը թողուս զիս,
գթութեան ձայն մը չլիսսիր սրտիդ մէջ... Ինչ յանցանք ըրի.
քեզի... խօսէ... Ինչ կը վճռես հօրդ՝ կեանք թէ մահ...

ՍԱՆԴՈՒԽՏ. Յաւիտենական կեանք...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ուրեմն կը ժխտես: (Զայրադեալ) Անիծեալ
ըլլան այն խաբեբայ յոյսերդ, դժու դժու ինքն որ ալ աղբիկս
չես՝ անիծեալ ըլլաս. մ'թին և յուսահատ ըլլան քու օրերդ
յաւիտեան. այն տանջանքները որ հօրդ տուիր՝ այն տան-
ջանքները վրայդ չպակսին: Բայց անմահ վայելքներու մէջ
ալ ըլլաս, մինչդեռ սիրոյ և մանկութեան զուարթ բաժակը
կը քամես՝ հօրդ ահարկու ստուերը գլխուդ վրայ կենայ և
թոյն կաթեցընէ բաժակին մէջ... (Մութիւն յերկինս հայելով)
Դու ալ կշտացիր՝ կշտացիր արեան ծարաւի աստուած,
յուսամ քիչ առենէն ջնջել հեքերդ աշխարհիս երեսէն ա-
րեան հեղեղներով: Նէք զէնքի վազեցէք՝ հօր Աստուածք
Ոլիւմպեայ. երկնից լայնածաւալ դաշտերը արեան ասպա-

րէզ դարձուցած՝ կռուի ելէք այս նոր աստուծոյս դէմ: Դողացընէ տիեզերքս ձեր զարհուրելի խառնուրդը... ահագին զէնքերուդ շողիւնը՝ հազարաւոր երկնքի արեւները մթնցընէ... և ահաբեկ տիեզերք արձագանգ տան ձեզի... այո՛ կործանի այդ աստուածը, և թող իր աւերակացը տակ ճմլէ տիեզերքն ալ զիս ալ՝ որ զուարթ ոգւով այնպիսի աւերակաց տակ կը մեռնիմ:

ՍԱՆԴՈՒԻՏ. (Մէլուսի) Ո՛հ Աստուած իմ... տկար կոյս մը ձեռքէդ մի՛ ձգեր... զարհուրելի բաժակ մը կայ դիմացս... ներէ իմ խեղացնոր հօրս:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛հ, իմ աղջիկս էր որ հառաչեց: Մեղայ դուստր իմ՝ դեռ քու հայրդ եմ... հնազանդէ Աստուածոց՝ և այն դառն անէծքները որ գլխուդ վրայ կարդացի՝ իմ գրէխուս գան բոլորն ալ՝ նազելիս... ես քու տեղդ մեռնիմ... Ահա այն ճակատը՝ այն սիրտը զոր թշնամեաց բանակներ չեն կրցած դողացընել խոնարհեցընել՝ այն ճակատը դիմացդ կը խոնարհի: Անխուով աչքով Սանատրուկ տեսաւ իր աթոռ սասանեալ, հազար ազգեր իրեն դէմ զինուած. Սանատրուկ անոնք տեսաւ և անխուով էր. լեռնադէզ ալեքները իր սրտին դէմ խորտակեցան, և դո՛ւ, իմ օրիորդս, դո՛ւ կուտաս ինձի այն հարուածը զոր թշնամիք չէին կրցած տալ: Քու քաղցրիկ մօրդ յիշատակին սիրուն ըլլայ, քու հօրդ մաղերուն որ քեզի ու հայրենեաց համար ճերմրկած են, քու մանկու թեանդ սիրուն, այն Աստուծոյն սիրուն ըլլայ գէթ զոր սիրոյ Աստուած կը կոչես, այսպէս անգուծ մ'ըլլար... մի՛ ուզեր պանդուխտ՝ յուսահատ ձգել զիս աշխարհիս երեսը: Ահա աչքէդ արցունք կը թափի... ո՛հ փայլի պիտի մեջէն արդեօք յուսոյ ծխածանը՝ թէ ատոր մէջ խղճուին պիտի սըրտիդ փափուկ զգացմունքները... խօսէ... դարձուր ինձմէ այն գթած արտասուալից աչքերը որ բաւական են քու հայրդ յիմարեցընել... սիրտս քեզի համար կտոր կտոր կ'ըլլայ... խօսէ... բայց մտածէ որ այդ խօսքէդ կախուած է հօրդ կեանքը... քու կեանքդ...

ՍԱՆԴՈՒԻՏ. Թէ որ աշխարհային պատճառ մ'ըլլար զիս դրգողը՝ քու խօսքերդ բաւական էին զիս ետ կեցընելու... բայց երկինք զիս կը հրաւիրեն. աներկիւղ կը թողում զաշխարհ, ցաւով մը միայն հայր իմ՝ որ դեռ ճշմարտութեան Լայսը չըմբռնեցիր...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ա՛լ բաւական է ... ո՛վ Երկինք մեզի վկայ ե-
ղիր. գուստր ընտրէ, (Սուրբ և Բազէ Դիմադ իւր)...

ՍԱՆԴՈՒԽՑ. Թէ որ այս սուրն է որ իմ եղբարցս ծոցը մը-
տաւ, Թէ որ այս սուրն է որ վերջ մը տալով Թշուառու-
Թեանցս՝ Աստուծոյս հետ պիտի միացընէ զիս՝ սո՛ւրը կ'ըն-
տրեմ՝ այո՛ սուրը... Իջեցո՛ւր հայր՝ այդ մահաբեր հարուածը,
վերջին վայրկեանիս ալ ցուցընեմ Թէ Սանատրկոյ արժանի
գուստր եմ... Զարկ՝ բայց մի մոռնար որ քու աղջկդ վար-
դագոյն արեանը մէջ՝ իր ձիծաղը խառնեց. զարկ՝ և ինչ որ
արցունքս չէ կրցած սորվեցընել՝ արիւնս սորվեցընէ, և այն
նուիրական լռին պատկառանքը՝ այն խաւարեալ յոյ-
սերս որ գերեզմանիս վրայ պիտի Թռչտին, անոնք հայր՝ ա-
նոնք Թերևս սիրտդ մեղմացընեն: Զարկ և Թաղէ զիս այն կոր-
ծանեալ տաճարաց շուքին տակ, իմ քրիստոնեայ եղբարցս
քով...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Հնազանդէ ինծի. իբրև Թագաւոր, իբրև հայր
կը հրամայեմ քեզի...

ՍԱՆԴՈՒԽՑ. Անհուն սիրով կը սիրեմ զքեզ, բայց իմ Աս-
տուածս քեզմէ ալ աւելի կը սիրեմ: Առ ոչինչ կը գրեմ ամէն
մարդկային պատկառանք, ազատ կը համարիմ անձս ամէն
կապերէ, ա՛լ զքեզ հայր չեմ ճանչնար՝ եթէ քրիստոնեայ
չես...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛վ զայրոյթ, ո՛վ յանդգնութիւն... պաշտէ՛
Աստուածները՝ կամ մեռիր...

ՍԱՆԴՈՒԽՑ. Քրիստոնեայ եմ:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ինչո՞ւ կ'ուշանան երկնից կայծակները այս
ամպարիշտը կարկեցընելու... պաշտէ՛ Աստուածները...

ՍԱՆԴՈՒԽՑ. Քրիստոնեայ եմ:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Փութա ուրեմն արիւնշաղախ սեղանը.
զքեզ զոհ կ'ընեմ Աստուածոցս. ահա քու մահուանդ վը-
շիւր...

ՍԱՆԴՈՒԽՑ. Զեմ գողար...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այո՛, պիտի գողաս՝ բայց շատ ուշ, երբ շողալ
տեսնես գլխուդ վրայ քու արեանդ ծարաւի սուրերը...

ՍԱՆԴՈՒԽՑ. Աստուած մը իմ հետ է...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Տեսնե՞րք եթէ այդ Աստուածը պիտի կարե-
նայ փրկել զքեզ իմ ձեռքէս: Ո՛չ. պիտի չկործանիք, ո՛վ

գիք, ցորչափ, կենդանի է Սանատրուկ, ցորչափ սուրը իր
ձեռքին մէջ փշրած չէ : (Մէկի :)

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՍԱՆԴՈՒԽՅ ԵՒ ԽՈՌ (Դահլճ)

(Սանդուխտ շնչապատ ինկած է Կէծէ)

ԴԱԷԻՃ. Այո, մեր տէրը Սանատրուկ թագաւոր կը հրա-
մայէ որ մէկգի թողուս այս շքեղ զարդերը, որ Հայոց թա-
գուհւոյն կը վայլեն, և ոչ թէ քրիստոնեայ մահապարտի մը :
ՍԱՆԴՈՒԽՅ. Իմ հօրս և թագաւորիս հրամանները կա-
տարուին :

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՆՈՅՆՔ ԵՒ ՇԱԽԱՐՇ

ՇԱԽԱՐՇ. Ներեցէք, գշտոյ, այսպէս յանկարծ ներս մըտ-
նելով ձեր խորհուրդները պղտորելուս, աղետալի գոյժ մը
ուռնիմ զոր չէի կրնար ուշացընել...

ՍԱՆԴՈՒԽՅ. Եւ ի՞նչ է...

ՇԱԽԱՐՇ. Ձեր անձնանուէր բարեկամը Երուանդ...

ՍԱՆԴՈՒԽՅ. Ո՛հ տէր, ի՞նչ կայ Երուանդիս վրայ, չուտ
ըսէ...

ՇԱԽԱՐՇ. Երուանդ զարհուրելի արիւնհակեղ պատերազմի
մը մէջ քաջութեամբ պատերազմելով...

ՍԱՆԴՈՒԽՅ. Ո՛հ, պատմէ ի՞նչ եղաւ... խօսէ...

ՇԱԽԱՐՇ. Ալանաց հօր բանակը երբոր հազարաւոր փողե-
րով պատերազմի հրաւերը տուաւ և հրեղէն ծովերու պէս
երկաթազէն գունդերը կը շարժէին, Հայոց անվէհեր բանա-
կըն ալ սկսաւ յառաջ երթալ : Արդէն օդին մէջ յաղթու-
թեան հրաւեր տալով դրօշները կը ծփան, արդէն բանակ
բանակի մօտ է, և մահը հազարաւոր կարիճներ կը հնձէ,
երբոր Ալանաց ձախ թէր ետ քաշուելով քաջալերուեցաւ
Հայոց աջ թէր ետէն ինկած ահագին ջարդ մը տալ :...
Բայց զարհուրելի տեսարան, անոնք դարան լարեր և Հայե-
րը խաբելով հոն որսացեր են : Հոն ահռելի արիւնհակեղու-

Թիւն մը Հայոց և Ալանաց մէջ. բոլոր պատերազմի դաշտին վրայ բանակները իրար անցեր են՝ ինչպէս փոթորկայոյզ ծովեր նեղուցի մը մէջ. սուրերը կը շողան խիտ առ խիտ գունդերուն մէջէն, ինչպէս մրդկաբեր ամպոց մէջէն փայլակը. արեան սև հեղեղներ կը թաւալին, գլորուելով ունայն սազաւարտներ և զրահներ որ իրենց քաջ տերանց լանջքը՝ ի զուր կը պահպանէին հայ նիզակաց դէմ: Ամենուն աչքէն կրակ կը թափթըփի՝ ամենուն ձեռքէն մահ. յաղթութիւնը տարակուսեալ թւերով երկու բանակներուն մէջ կը թռչէր տի: Այս խառնուրդիս մէջ ահա Երուանդ իր հեծելազոր գնդաւը կը յարձակի: Յաղթութիւնը զուարթերես՝ իր հոգ մածուփ դրօշներուն վրայ կը նստէր: Զիւաւորաց և հետևակաց գունդերուն մէջէն արիւնոտ ճամբայ մը կը բանայ իրեն. հազարաւոր սլաքներ իր չորս կողմը կը սուլեն կը սահին, բայց կարծես չեն համարձակիր իր սիրտը մտուելու, կամ թէ անծանօթ ձեռք մը զանոնք կը հեռացնէ. իր երիվարը խրխընջելով կը կոխկրուտէ բիւրաւոր դիւցազանց մարմինը, որ քիչ մը առաջ գերութիւն և մահ կը սպառնային: Թշնամեաց մէջ խռովութիւնը կը տիրէ, լայնածաւալ դաշտերը նեղ կ'երեւան փախչողներուն, Հայերը կը քաջալերուին... այլ հոն Թշնամեաց դիականցը վրայ՝ պատառոտեալ և արիւնոտ դրօշներուն մէջ՝ սուրը ձեռքը փշրած՝ իր վահանին վրայ Հայոց դիւցազնը կ'իյնայ...

ՍԱՆԴՈՒԽՅՈՒՆ. Ո՛հ...

ՇԱԽԱՐՇ. Դառն յաղթութիւն, զոր Հայերը դիւցազնի մը գնով գնեցին... Արդ զիս որ իր քաջութեանցը վկայ եղայ՝ կը խաւրէ առ քեզ իր յետին ողջոյնը մատուցանելու, և կ'աղաչէ որ չմոռնաս զինքը... Այլ, ո՛վ դիք, կը ցնորի կոյսը... բարեկամօ օգնէ իրեն:

ՍԱՆԴՈՒԽՅՈՒՆ. (Միշտ ցնորած) Ո՛ւր եմ... ո՛ւր եմ... Թողէք զիս... ո՛րն է այս արիւնշաղախ գաշտը... անուն մը կը մրմնջեն այդ շրթունքը... այդ նուաղեալ աչքերը մէկը կը փնտռեն... Երուանդն է ինքը... Երուանդն է... զէնքեր բերէք ինձի... զինուիմ... երթամ այն դաշտը... մինակ է Երուանդ...

ՇԱԽԱՐՇ. Մխիթարուէ կոյս. անօգուտ են արտասուք որ գերեզմանի մը անզգայ քարին վրայ կը կաթին...

ՍԱՆԴՈՒԽՑ. (Հոյսպէս) Թող փութա Հայաստան իր աղաա-
արարին շիրիմն ողորենելու. ես ապաշնորհ, ես քու մա-
հուանդ պատճառ՝ հեռու պիտի կենամ։ Ո՛հ, թէ որ ես հե-
տըդ գայի՝ և քեզի ուղղուած հարուած մը զիս քու ուքդ
նետէր։... Բայց զքեզ մոռնա՛լ, զքեզ... ո՛հ, երբ արտասուք
ջնջեն սրտէս ամենէն քաղցր յիշատակները, քու անուագ
անջնջ պիտի մնայ...։

ՇԱԽԱՐԵ. Վէրքերդ մի նորոգեր բամբիշ. վաղ կամանա-
գան կ'անցնին վիշտք։...

ՍԱՆԴՈՒԽՑ. Մայր... ո՛հ, կանչեցէք մայրս... պատմեցէք
իրեն իմ անձկութիւններս... իր համբուրիցը անձկակարօտ
շթթունքս կը տոչորին... Ահա դարնանազայր հեղեղի պէս
վրաս կը յարձակի մոլեգին ամբոխը... ո՛ր փախչիմ... ո՛հ
մայր, քու գերեզմանդ կ'ապաւինիմ...։

ՇԱԽԱՐԵ. Գթա՛ երկնային կոյս, գթա երիտասարդու-
թեանդ... 'ի դուժ կը շարժին վրագ անշուշտ երկինք...։

ՍԱՆԴՈՒԽՑ. Բոց մը կը բորբոքէ զիս... Ծարաւը շթթունքս
կը հիւծէ... Շաւարշանայ դաշտը վազեցէք... հոն խոր ան-
ձաւի մը մեջէն զով և յստակ ալիքներ կը բլխին, բերէք ինձ։
Հոն իմ կոյս ընկերքս՝ քնարներու դիւթիչ ձայնովը կը պա-
րեն... ըսէք անոնց որ ծաղկեայ պսակներ հիւսեն ինձ... սի-
րոյ զոհ մըն եմ... Ծաղիկներ սփռեցէք զլիսուս վրայ... Ծա-
ղիկներ սփռեցէք գերեզմանիս վրայ...։

ԴԱՀԻՃ. Ո՛հ թշուառ կոյս...։

ՇԱԽԱՐԵ. Երջանկութիւնը կը սպասէ քեզի, մի վախնար
նազելի Սանդուխտ...։

ՍԱՆԴՈՒԽՑ. Տեսէք, տեսէք սա խաւարամած բանտերը որ
աչքիս դիմաց կը բացուին... տեսէք ի՛նչ տխուր լոյս կ'արձը-
կէ անոնց վրայ դահճին ջահը... Լսեցէք շթթաներուն շառա-
չիւնը... տեսէք մահը որ սովալլուկ գայլի մը պէս վրաս կը
յարձակի... Բարեա՛ւ երթայք մանկական յոյսք... բա-
րեաւ երթ յուսածիծաղ հասակ... Բայց աւանդ, ես կը ցնո-
րիմ... ոչ ոք կ'անսայ ինձ... մ'թին ամպոց մէջ մոլորած
տատրակին նման՝ ցաւոց մէջ կը կորսուի հոգիս։ Ինչո՛ւ կ'ու-
շանաք, տարէք զիս այդ նսեմ բանտը... ա՛լ ինքզինքս պաշա-
պանե՛լ չեմ կրնար...։

ԱՐԱՐՈՒԱԾ Ե.

ԲԱՆՏ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՍԱՆԴՈՒԽՅ

(Շղթաներու մէջ պառկած, բանաբն խորը լռութեամբ ամպի մը մէջէն
ձօրն սքողեցը ի'երեւոյն:)

(Իբրեւ թէ երազ Գեորգի: Ո՛վ անձկալի ծոց... ո՛վ իմ մանկութեանս գեղեցիկ օրորոցը... զքեզ իմ ծոցս կը գրկեմ... և երջանիկ եմ... սակայն դու լուռ ես, դու որ չէիր կրնար աղջիկդ տեսնել առանց սիրոյ խօսք մ'ըսելու... բայց աչքէդ արցունք մը կը կաթի... մայր իմ՝ փարատէ տրտմութիւնդ. ահա իրարու գիրկն ենք... Եկուր վերջին անգամ մ'ալ երկրիս վրայ միատեղ լալու հաճոյքը վայելենք... (Սթափ.) Ո՛հ... երազ էր... այս ի՛նչ մութ... ի՛նչ հաւաոր տեղ է... սիրտս կը դողայ... Քոն անուշակ՝ ինչիւր արտեանանցս վրայ... խաբէ իմ ցաւերս հեշտ երազներով... Թշուառի մը համար մոռացութենէն քաղցր ի՛նչ կայ... (Շղթաներէն իջաւ. Ժիւն:) Ի՛նչ տխուր ձայն կը կրկնեն այս խոր կամարները... արդեօք մ'թուլեան մէջ թափառող ստուերներն են որ զիս կ'ողբան... Թողուցէք զիս, թողուցէք զիս, ո՛հ գթացէք ինծի... ես անմեղ եմ... Եկուր ուրեմն, ո՛վ մահ, եկուր ալ տանջանքներս մ'երկընցընէր... այն ծաղիկները զոր սերը պիտի քաղէր՝ դու զանոնք ժողովէ, և անոնցմով քու տխուր սափորդ զարգարէ... Անձկալի լոյս արեւու, զոր աչքերս ընդունայն տեղ կը փնտռեն՝ բարեալ մնա... ես կը մեռնիմ ահա... և ոչ ոք կը հոգայ զիս... (Կ'իյնայ նոսաղեալ:)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅՆ ԵՒ ԵՐՈՒԱՆԻ (Վէրեբը Կապած):

ԵՐՈՒԱՆԻ. (Հիայնաբէ:) Մարդասխանձ դաշտին վրայէն՝ դեռ փառաց արիւնազանդ մրտենին ճակատս՝ որ զօրութիւնը զիս մահուան ցրտասարսուռ գրկերէն յափշտակելով՝ հոս կ'առաջնորդէ:... Սէր՝ կոյր առաջնորդ իմ քայլերուն՝ քու խաբերայ երազներուդ մէջն եմ դարձեալ թէ ճշմարտիւ Սանդուխան է տեսածս: Շղթաները իրեն բարձ առած՝ այս ահաւոր բանտիս մէջ անխուով կը ննջէ՝ մարդկային վշտերը մխիթարելու խաւրուած այս հրեշտակը, ինչպէս աստղի մը լոյսը գերեզմանին վրայ: Ժպիտը բոլորովին թուումած չէ իր շրթանց վրայ, տժգոյն է իր ճակատը՝ թեթև ամպի տակ ծածկուած լուսնի նման. ընդհատ է իր շունչը՝ ինչպէս կէս գիշերուան հովը՝ որ կը շնչէ և կը գադրի: (Ստիպարին զնայնաբէ նայելով:) Ո՛հ, հրեշտակ մ'ըլլայի թեթև թևերով այն հոգւոյն մէջ իջնալով՝ վերքերը բժշկելու: Ո՛վ գիտէ՝ սիրոյ երազոց մէջ որորուելով հիմայ՝ կը յիշէ թերեւս այն երջանիկ վայրկեանները՝ որ առանձին դիմացէ դիմաց նստած՝ մոռնալով բոլոր աշխարհս՝ իրարու նայուածքներուն մէջ կ'ապրէինք: Շրթունքնիս չէին համարձակեր մեր հոգւոյն գաղտնիքները յայտնել, բայց վարդափթիթ ժպիտ մը՝ հեղձամղձուկ հառաչանք մը միայն՝ մեր կաթոգին իղձերը կը մատնէին, ինչպէս երկու երկնաւոր էակներ որ դէմադէմ կեցած լուռ՝ մահկանացուաց ականջը չհասկըցող ներդաշնակութեամբ կը խօսին...

ՍԱՆԴՈՒԽԱՆ. (Քնոյն մէջ:) Գթութիւն... ո՛հ Տէր... դըթութիւն...

ԵՐՈՒԱՆԻ. (Զնայնաբէ:) Անմահից պատկներէն փրցուած ծաղիկ, ո՞վ զքեզ դատապարտեց այս ախուր հովտիս մէջ թռուռելու...

ՍԱՆԴՈՒԽԱՆ. (Սթափելով:) Հրեշտակ գթութեան, իջա՛ր ուրեմն թշուառի մը արցունքները սրբելու...

ԵՐՈՒԱՆԻ. Մի ցնորբի՛ր՝ Սանդուխա՛. տես ո՞վ է...

ՍԱՆԴՈՒԽՅ. Երուանդ... ո՛հ քու տեղդ գերեզմանիս տը-
խուր ճամբուն վրայ մխիթարութեան նշոյլ մը կ'արձրկէ...
ԵՐՈՒԱՆԴ. Գերեզմանիդ...

ՍԱՆԴՈՒԽՅ. Կը տեսնես այս շղթաները...

ԵՐՈՒԱՆԴ. Թոյլ տուր ինձ համբուրել զանոնք...

ՍԱՆԴՈՒԽՅ. Կը տեսնես այս խաւարամած բանտը...

ԵՐՈՒԱՆԴ. Դու հոն ես Սանդուխտ, ինծի համար արքայ-
ութիւն է...

ՍԱՆԴՈՒԽՅ. Ահա ինչ որ մնաց ինծի...

ԵՐՈՒԱՆԴ. Յորչափ ապրի Երուանդ՝ մի վախնար. եթէ
սուրը խորտակի ձեռքին մէջ՝ իր վերաւոր մարմինը քեզի վա-
հան կ'ըլլայ...

ՍԱՆԴՈՒԽՅ. Երուանդ՝ այս գերագոյն ժամուս մէջ յորում
երկիրս ինծի նահատակութեան ասպարէզ մը դարձած է՝ և
երկինք հանգիսագիր են, ինչո՞ւ խաղաղութիւնս պղտորել
կ'ուզես. իբրև քրիստոնեայ նկատէ զիս հիմայ. ա՛լ մոռցիր
տկար կոյսը...

ԵՐՈՒԱՆԴ. (Բռռռ:) Ձքեզ մոռնա՛լ... ո՛հ ոչ. մեռնի՛լ...
Կը տեսնես այս վէրքերը, (Ձգահը Բռռռռռ):

ՍԱՆԴՈՒԽՅ. Երկի՛նք...

ԵՐՈՒԱՆԴ. Մի զարհուրիր. քեզի համար առի զանոնք...

ՍԱՆԴՈՒԽՅ. Եւ եկա՛ր...

ԵՐՈՒԱՆԴ. Ձքեզ փրկելու...

ՍԱՆԴՈՒԽՅ. Եթէ անհնար է...

ԵՐՈՒԱՆԴ. Մեռնելո՛ւ...

ՍԱՆԴՈՒԽՅ. Եւ ինչպէս պիտի ազատես զիս...

ԵՐՈՒԱՆԴ. Հօրդ միտքը ամոքելով...

ՍԱՆԴՈՒԽՅ. Ընդունայ՛ն ջանք...

ԵՐՈՒԱՆԴ. Մէկ հրամանիս կը սպասեն բոլոր Հայոց գուն-
դերը, արեան հեղեղներով մահուանդ դատակնիքը պիտի
ջնջեմ. (Յերթառն.)

ՍԱՆԴՈՒԽՅ. (Եփեփ:) Ա՛հ քու սիրուդ ըլլայ Երուանդ,
քու ամենէն սիրելոյդ գլխուն՝ վերջին ձայնս մտիկ ըրէ. խա-
ղաղութեան Սատուած մըն է այն որուն համար կը մեռնիմ, և
ուրիշ կերպով չ'սանձեր իր Թշնամեաց սրոյն կատաղութիւ-
նը՝ բայց հեղութեամբ պարանոցը անոր ընծայելով: Սակայն
Թէ որ աղաչանքս ընդունայն է՝ Թէ որ կ'ատես զիս՝ այն ա-

նօրէն սուրը որ հօրս գէմ պիտի բարձրացընէս՝ նախ իմ ծոցս միւտե... իմ արեանս մէջ հօրս կատաղութիւնն ալ՝ քու ատեւ լուծիւնդ ալ շիջանին...

ԵՐՈՒԱՆԻ. Երբոր անհրաժեշտ է զոհը՝ երբոր արիւն կը խնդրէ այդ Աստուածը, թող ես երթամ ուրեմն այն սեղանին վրայ քու տեղդ զոհուելու...

ՍԱՆԴՈՒԽՅ. Ո՛հ, ապրէ. ես տկար կոյս՝ ուրիշ բան չեմ կրնար տանիլ խաչին ոտքը, բայց արցունք մը և արեանս կաթիլները. դու փառաց ասպարեզին մէջ քաղէ քեզի պատրաստուած մրցանակները՝ և եկուր այն խաչին ոտքը նետելու. ապրէ, և եթէ յիշես զիս, շիրմիս վրայ եկուր ինծի մը տածելու...

ԵՐՈՒԱՆԻ. Ուրեմն զիս կը թողնու...

ՍԱՆԴՈՒԽՅ. Յաւիտեան երկնից մէջ միանալու համար. հոն կը կոչէ զիս Աստուած...

ԵՐՈՒԱՆԻ. Զքեզ տեսնելով կ'ուզեմ հաւատալ թէ Աստուած մը կայ. բայց հաւատալով այն Աստուծոյն զոր ձայնդ ինծի կը սորվեցընէ, ո՛հ մի՛ խաբուիր, քեզի է որ կը հաւատամ. և եթէ խորտակէ 'ի քեզի ր ամենէն զգալի պատկերը՝ եթէ քու ժպիտդ թողմելով՝ ամայանայ ինձ աշխարհ, է՛հ, պիտի ըսեմ ան ատեն թէ աս աշխարհս գիպուածոյ ծնունդ է՝ և թէ թշուառութիւնը՝ իր երկաթեայ գաւազանովը կը վարէ զտիւն. զերս... Ան ատեն պիտի մտնեմ մահուան ստուերներուն մէջ հարցընելու թէ ո՛վ է ստեղծեր զմարդ և ինչո՞ւ այսչափ թշուառ. թէ ինչո՞ւ ինքը որ կրնար երջանկութիւն բաշխել մահ և աղէտք սիրեր է մարդուն ճամբուն վրայ... Բայց եթէ սիրոյ էակ մը կայ հոն, ո՛հ, ան ատեն վրէժխնդրութիւն պիտի կարգամ աշխարհիս վրայ... անէծք և վրէժ քու վրայ ալ...

ՍԱՆԴՈՒԽՅ. Անիծէ՛ զիս... բայց ճանչցիր զինքը...

ԵՐՈՒԱՆԻ. (Սխալեալ) Ո՛հ... Խնչ ըսի... Թշուառ... իմ վերաս իննան անէծք, իմ վրաս փշրին քեզի սպառնացող կայծակունք... Թող ինձ միայն որ գէթ իբրեւ եղբայր քու ետեւդ գամ... Մէկ սեղանի վրայ՝ երկու ողջակէզ զոհութիւնք... Ան ատեն՝ թէ և յաւիտեանականութիւնը մոռնալ և անեղը անապատ մ'ըլլայ, թէ և անգութ աստուածք հոն տիրեն՝ կը գթան անշուշտ մեզի՝ քու անմեղ ճակատիդ վրայ արեան բիծը նշմարելով... Թող հիմայ աղէ քու շղթաներդ...

ՍԱՆԴՈՒԽՑ. Սիրոյ համար թեթև են շվթոյք...

ԵՐՈՒԱՆԻ. Քանզոր է քեզի վատահամբաւ մահ մը...

ՍԱՆԴՈՒԽՑ. Վատահամբաւ չէ Աստուծոյ համար մեռնիլ:

ԵՐՈՒԱՆԻ. Եւ մինչև ցերեկ պիտի յամառիս...

ՍԱՆԴՈՒԽՑ. Մինչև որ ճշմարտութիւնն ըմբռնես:

ԵՐՈՒԱՆԻ. Խաբեպատիր ցնորք:

ՍԱՆԴՈՒԽՑ. Երկնայի՛ն ճշմարտութիւնք...

ԵՐՈՒԱՆԻ. Ի սէր այն սուրբ հանգուցին որ կը կապէ զմեզ՝
մի թողուր զիս...

ՍԱՆԴՈՒԽՑ. Ի սէր երկնից հետս եկուր...

ԵՐՈՒԱՆԻ. Կ'ուզես ուրեմն որ սուրս իմ կենացս վերջ մը
տայ...

ՍԱՆԴՈՒԽՑ. Մէկտեղ մեռնինք և մէկտեղ ապրինք յաւի-
տեան...

ԵՐՈՒԱՆԻ. Ո՛հ դու երբէք չսիրեցիր զիս անողորմ... և ես
ինքզինքս մահուան ճիրաններէն յափշտակելով եկայ մինչև
հոս... (Չօրականայ.) Առէ՛ք՝ մահուան դաշտը տարէք զիս...
հոն մեռնիմ... տռանձին...

ՍԱՆԴՈՒԽՑ. Ո՛հ.. որչափ կը ծանրացընես ինծի այս յե-
տին հարուածը...

ԵՐՈՒԱՆԻ. Ո՛վ քաջ նիզակակիցք իմ... տարէ՛ք զիս... ահա
կը նուազիմ...

ՍԱՆԴՈՒԽՑ. Կեցիր.. ըսէ ինծի, ի՞նչ կը բաղձաս...

ԵՐՈՒԱՆԻ. Ահաւոր անդունդ մը զմեզ իրարմէ կը բաժնէ..
յաւիտենականութիւնը... (Չօրական գանիւն Վերսանդ.)

ՍԱՆԴՈՒԽՑ. (Ագիտացեալ հայի ընդ երկիւն:).. Ոհ երկինք,
գթութիւն.. ա՛լ բաւական է... (Մէնի:)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԹԱՂԵՈՍ ԵՒ ԽՈՒՄԲ ԳՐԻՍՏՈՆԷՒՅՈ ՈՐ Ի ՄԱՀ ԵՐԹԱՆ

ԹԱՂԵՈՍ. Առաքինի՛ն հաստակք՝ անվեհեր յառաջ մատիք
...տեսէք այն աստեղահիւս պսակները որ երկրիս թան-
ձրամած ստուերներուն վրայ կը շողան.. թող խնայ աչքեր-
նէդ մահացու քողը՝ և տեսէք թէ որպիսի անձկաւ հրեշ-

տակք՝ ընկերք ձեր՝ գրկաբաց կը սպասեն ձեզ յերկնուստ :
Զուարթ երգերով ողջունեցէք զանոնք...

Ո՞հ 'ի պարոնէ՝ յառաջ յապտեցալ՝ տե՛.

Երբ փշրի քնար 'ի ձեռս մատաղ քերթողի՝
Հեշտ ևս հնչէ իր յետին ձայնն օդոց մէջ.
Արևն 'ի մուտս 'ի ծայր լերանց երբ ժըպտի՝
Իրեն ժըպտան աւելի քաղցր է և պերճ.
Եւ ինչո՞ւ մեր սիրտք՝ երբ մահուան դռնէն
Յաղթութեան գիմեմք՝ պիտի չնուագեն :

Պար .

Երգեսցուք Տեառն զօրութեանց
Որ ըզբանակրս խորտակէ .
Եւ ընդ հրեղէն դասուն նուագաց՝
Ձայն մեր յաթոռ նորա ելցէ :

Ձայն յԸ .

Սպառազէնք և կառարշաւ գիւցազունք՝
Զերդ հրաբորբոք անսառ շարժեալ 'ի հողմոց ,
Լեռներ գաշտեր ըսպառնալով ծածկեցին .
Անոնց ցասման՝ աշխարհքներ քիչ թուէին .
Բայց Դո՛ւ նայեցար... և անոնք սուղան
Ի վիհս որ իրենց ներքեւ բացուեցան :

Ուրիշ խայն յԸ .

Ելաւ հըզօրն՝ և իր հուժկու թևերով
Խըլեց քանդեց տէրութիւններն 'ի հիմանց .
Լըռեց առջևն երկիրս... և ինք միայնակ՝
Աւերից վրայ կանգնեց զիւր դահ խրոխտապանծ ,
Ճակատ երկնավէճ վերցուց Քեզի դէմ...
Քու կայծակդ ինկաւ... փշրեցաւ անդէն :

Պար .

Հըզօր Աստուած դու զօրութեանց՝
Ո՛վ քեզի հետ կը բաղդատուի .
Առջիդ՝ ոչինչ են տիեզերօք .
Ոչինչն է քեզի տիեզերօք լի :

Երբորդ յայն հ .

Հայեցաւ խրոխտն 'ի կորակոր այս երկիր .
Արենակաթ սուրն երկնից գէմ շողացուց ,
Եւ գօչեց . « Ո՛վ իմ ճակատուս մրտենեօք
կրնայ իր գլուխը պսակել . ո՞ր Աստուած
կրնայ խորտակել սուրն իմ ձեռքիս մէջ
կամ յափշտակել զաշխարհ ճիրանէս :

« Հայու լեռանց վըայ ծըփան իմ դրօշներս .
կարմրցան ջուրք գետոց արեամբ թշնամեացս .
Գիշերայն՝ բոցք ատրուշանացն օգասլաց՝
Հրեղէն պալատս կանգնեն ամպովք երկնամած .
Եփրատէն Գանգէս՝ 'ի լուր իմ անուան՝
Զարհուրած ալիք արձագանդ կուտան : » ...

Զորբորդ յայն հ .

Եւ հիմայ զմեզ՝ իբր ողջակէզ անմըռունչ
Իր անողորմ սըրոյն ճարակ կը մատնէ : . .
Արդարութիւն չենք խնդրեր՝ Տէր , այլ միայն
Մեր արեանց վըայ զըղջման արցունք մը թափէ . . .
Եւ մեր շիրմաց քով թող վարդեր ծըլին
Որով քու անմահ տաճարք զարդարուին :

(Մինչդեռ ինչ հեռանան, ներսէն փխուր յայնով հեփեաւ երգը եւ .
գելով՝ Սանդուխտ արքայստաւից ի՛նչեւայ , եւ հփի ի՛նչէ :)

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՍԱՆԴՈՒԻՑ ԵՒ ՊԱՐ (ՈՐ ԻՆԴԷ ՆԵՐԱԷՆ ԵՂՆԱԿԱՆ)

Ո՛վ անցաւոր վայելք և փառք
Ո՛ւր վերջանայք... 'ի գամբան...
Եւ որ 'ի ձեզ յենու զըւարթ
Առեալ գլորէք 'ի վիհն այն...

Ո՞ արբուսցէ զպասքեալս հոգի
Ո՞ զխռովութիւնս հաշտեսցէ.
Եւ ո՞ զծնդեալ ծաղիկ սրբոյն
Ի ցօղ զըւարթ արբուսցէ:

Եկ ո՛հ եկ խաչդ յաւիտենից՝
Որ տարածեալ ըզբողոկ
Եւ ընդ անմահ քով հովանեալ
Հանգիստ նընջեն մահացուք:

Ծարաւատենչ հոգւոյս իջցէ
Յօղ կենսատու սուրբ արեան,
Որպէս 'ի վարդ արեւակէզ
Արտօսը այգուն շայեկան:

Մինչ ըզմահուան գառն բաժակ՝
Ի ձեռս առեալ կամ յըմպել,
Տուր մոռանալ զանձն իմ խապառ
Տուր ինձ ըզմահ քո յիշել:

Մինչ առաթուր կոխեմ ոտից
Ըզմանկութեան վարդս՝ ըզթագ՝
Եւ ըզգլխովս ըսպառնալից
Ձինջ մերկացեալ կայ վաղակ,

Ներեա՛ սրբոյն որ զիս հարցէ,
Դիր ցօղ մի լոկ յաչս գահճաց, ...
Ներեա՛ նոցա, զիս զօրացո,
Վանե՛լ զերկիւղ մահազգեսաց: ...

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԹԱԴԻՈՍ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՈՍ

ԹԱԴԻՈՍ. Կու՛լան, կոյս գու. չէի կարծեր որ այսպիսի վսեմ ժամու մէջ դողայ Քրիստոնեայ մը...

ՍԱՆԴՈՒԽՈՍ. Յօժար է հոգիս՝ բայց մարմինս տկար...

ԹԱԴԻՈՍ. Քաջալերուէ բամբիչդ Հայոց. նուիրէ Աստուծոյ կուսուածեան առջի շուշանը վարդագոյն արեամբ կարմրացած...

ՍԱՆԴՈՒԽՈՍ. Քաղցր է այն ձայնը որ զիս կը մտիւթարէ. բայց ո՛հ, երբ պիտի դադրին մրրիկները... երբ իմ ալեծուսի նստակս խաղաղութեան նաւահանգիստը պիտի հասնի...

ԹԱԴԻՈՍ. Տես, ո՛վ կոյս անփորձ, տես այս ալեզարդ ճակատս, կը ճանչնամ զաշխարհ... իրեն բոլոր ծաղկափթիթ դաշտերէն անցայ... բայց ուր որ ուզեցի քննել՝ ոտքիս տակ թշուառութեան ահագին անդունդը բացուած տեսայ: Ընթացայ ընդ երկար իր ուրուականներուն ետեւէն, որոնց ճակատին վրայ յոյսը կը ժպտեր, որոնց հետքերը ծաղկունք կը ծլէին... բայց աւանդ... անոնք ամպի պէս փարատեցան... և տեսայ որ ոտքիս տակ... գերեզման մը կայ: Է՛հ, ի՛նչ է կեանքը... մանկութիւն երիտասարդութիւն այրութիւն ծերութիւն... Ժըպիտ մը՝ արցունք մը՝ կսկիծ մը և յիշատակ մը...

ՍԱՆԴՈՒԽՈՍ. Վաղանցուկ է աշխարհ, բայց անցած ժամանակը հրեղէն հետքեր կը թողու սրտին մէջ...

ԹԱԴԻՈՍ. Յիշէ այն ժամը յորում Աստուած մը ինքնին լքեալ և անոք կը տառապէր. ոլոռն ոլոռն արիւնը կը հոսէր իր ճակտէն. իր հառաջանքները կը կորսուէին յաւիտենականութեան անդնդին մէջ: Աստուած մը աիեղերաց մէջ արձանացեալ, մէկ ձեռքով վեր կը վերցնէր վերկիր որ կը գլորէր կորստեան անդնդին մէջ, և միւսով կը ջնջէր իր արեամբն երկնից երեսէն մարդկութեան վճռուած դատականիքը: Եւ դու կը տարակուսիս...

ՍԱՆԴՈՒԽՈՍ. Ամեն բանի պատրաստ եմ ես... բայց Երուանդ... քիչ մ'առաջ հեռացաւ ասկէ լի ցամաքմբ...

ԹԱԴԵՈՍ. Լուէ... ինքը քրիստոնեայ եղաւ...

ՍԱՆԴՈՒԻՑ. Ո՛վ անպատու մ ինդուլթիւն... քրիստոնեայ,
և ինչպէս...

ԹԱԴԵՈՍ. Շնչասպառ ընկողմանած էր վտակի մը քով և
չէր կրնար իր նուազեալ աչքերը վերցընել: Երբ անոր հեծե-
ծանքը լսեցի, փութացայ օգնել իրեն, որ տեսնելով զիս
ախուր ձայնով գոչեց. « Ի սէր Աստուծոյն զոր կը պաշտես՝
օգնէ ինձի... Յուսահատ առանձին կը մեռնիմ ես ահա...
կաթիլ մը ջուր... պապակեալ չթունքս կ'այրին »: Աս ըսե-
լով՝ արիւնը գունդադունդ կը վազէր, և ոյժը կը սպառէր:
Մոլորահետ առուակին յստակ ջրէն սաղաւարտին մէջ լե-
ցուցի, և իրեն տալով՝ կապեցի վէրքերը և քիչ մը շունչ ա-
ռաւ: « Որդեակ իմ, ըսի իրեն, մի՛ յուսահատիր. վաղ կամ
անագան, պէտք է թողունք զաշխարհ: — Է՛հ, գոչեց, երբէք
չեմ վախցած մահուընէ, ան շատ անգամ իմ սրոյս պաշտօ-
նեայն եղած է. այլ ան անձը որուն համար քաղցր էր ինձ
կեալ և մեռանել՝ նոյն ինքը կը թողու որ իմ մանկութիւնս
արեանց մէջ թուամի »: ... Եւ քիչ մը դադարեւէն վերջը « Ե՛լ
գնա, ըսաւ, բարի ծերունի. շնորհակալ եմ քու երախ-
տեացդ... գնա և թող որ մեռնիմ »: ... Սփոփեցի ես զինքը մինչև
անժոյժ արտասուք իր աչքերէն վազեցին. ուղից այն տառն
մկրտուիլ՝ և ես ամեն բան ըստ կրօնից պատուիրանացը կա-
տարեցի: Բայց ահա ինքն իսկ կուգայ:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԵՐՈՒԱՆԻ (Դրանէ յեղեալ ի դժբախտ.)

ԵՐՈՒԱՆԻ. (Կիսամահ, Դիւս զնայմամբ:) Թողէք զիս զօրականք:
Մօտ եկուր ինձի սիրելի... քովս ինչիւր յերկնից անմեղ հը-
րեշտակ, և երկրիս եղեբքներուն վրայ թափառող հոգի մը՝
թող որ քու լուսաւոր թևոցդ ապաւինած՝ ազատի իր վըշ-
տերէն...

ՍԱՆԴՈՒԻՑ. Երուանդ, մահուան տխուր տապարեղներուն
վրայէն՝ թռչին մեր հոգիները երկու անբաժան տատրակնե-
րու նման...

ԵՐՈՒԱՆԻՒ. Այժ մի թողու՛ր զիս... կոյս... եթէ կենաց ընկեր չներեցին երկինք որ ըլլամ քեզի, եթէ փառաց աթոռ միատեղ չկրցանք նստիլ՝ նոյն գերեզմանին մէջ միատեղ թող հանգչին մեր ոսկերքը... այն վիմին վրայ կախեն իմ մրտենիներս, իմ սուրս... և քանի մը անթառամ ծաղիկ սփռեն որ մեր... սէրը... յիշեցնեն...

ՍԱՆԴՈՒԻՅՑ. Տես... վարդափետուր թւերնին մեր չորս կողմը թրթռացնելով յատեղս կը հրաւիրեն զմեզ զուարթունք... հոն պիտի ըլլայ մեր հարսանեաց առաջաստը... հոն երջան կաւէտ և անմահ սէր կը սպասէ մեզի...

ԵՐՈՒԱՆԻՒ. Ո՛հ, ինչ քաղցր, ինչ մխիթարական զգացմունք... երբ աչքս յերկնուստ երկրիս վրայ դարձնեմ... և տեսնեմ... որ նոյն խաչին ստուերը մեր երկուքին շերմացը վրայ կը ծալի...

ՍԱՆԴՈՒԻՅՑ. Տես ինչպէս մեզի գէմ կը զննուի աշխարհ... կարծես թէ երկինք կը բորբոքին՝ հոն արշաւող հրեղէն կառքերէն... լսէ ինչ քաղցր ներգաշնակութիւն կը հնչէ հեռուէն... ո՛հ, ծաղկապսակ ողբակէզներու պէս՝ զուարթ դիմենք սեղանը...

ԵՐՈՒԱՆԻՒ. Երբ թռումին ծաղկունք... երբ շիջանին եթէ ըստ ջահերը և երկինք հիմնայատակ կործանին, այն տիեզերական գերեզմանին մէջէն, սիրեցեալդ իմ, մեր հոգիներն ելլելով պիտի խնդրեն զերար. այն մահահամբոյր լուծեան մէջ՝ պիտի պատասխանեն իրարու... Բայց ես... ես կը նուաղիմ... աչքերէս լոյսը կը կորսուի... կ'անհետանայ երկիր... ո՛հ... ո՛ր կը տանին զիս... ո՛ր... հետս եկուր՝ Սանդուխտ... ինչ զմայլումն... ո՛հ, կը մեկնիմ աշխարհէս... Արիւնս՝ հայրենեաց... սիրտս՝ քեզի... հոգիս՝ Աստուծոյ նուիրեցի... Ողջամբ մնա... Երկնից վայելքներու մէջ... անձկաւ կը սպասեմ... քեզի... (Կը մեռնի):

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՆՈՑՆՔ ԵՒ ԴԱՀԻՃՔ

ԴԱՀԻՃ. Կոյս, և դու ծերունի, թողուցէք այս բանաը և հետս եկէք...

ՍԱՆԴՈՒԻՑ • (Որ Գրիկ Ղևրուանդ անշնայեալ, աշխարհ յայնիս)
Ի սէր Աստուծոյ, հոս թող զիս :

ԴԱՀԻՃ • Ի մահ... .

ՍԱՆԴՈՒԻՑ • Հոս, այս մարմնոյս վրայ սպաննեցէք զիս...

ԴԱՀԻՃ • Չափազանց խօսեցար՝ երթանք...

ՍԱՆԴՈՒԻՑ • Աստուծոյ սիրուն՝ հոս խողխողէ զիս...

ԹԱԴԻՈՍ • Այո, խմէ այս բաժակը մինչև յատակը...

ՍԱՆԴՈՒԻՑ • (Եռադէտլ) Հայր, երթանք...

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՇԱԽԱՐՇԱՆ ԴԱՇՑ

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԵՒ ԴԱՀԻՃԳ (Ի խոր երկուսսէս խոսու Բաղնաթիւն
Ժողովրդեան որ հազիւ երեւին :)

ՍԱՆԱՏՐՈՒԿ • Վրէժխնդրութեան ժամը հնչեց : Անգուլթ
սիրտ, պիտի՝ հանդուրժեա աղջկանդ յետին ողջոյն լսել...
և մինչքեռ ինքը արիւնը կը թափէ՝ քու աչքերէդ արցունք
մ'ալ պիտի չ'կաթին... Եւ դու արեւ զարհուրած ես պիտի
չգարձընես անիւներդ, երբ տեսնես հայր մը սուսերամբերկ իր
հլու աղջկանը վրայ... Ի՛հ... ինքը պիտի մեռնի, և ես ա-
պրիմ : Պիտի չկարծեմ իմ աղջկա հարսանեաց խաւրէ՛լ մինչ-
դեռ ինծմէ հեռու... իր կենաց դեռափթիթ ծաղիկը ոտքիս
տակ կը կոխկըռտեմ... Ո՛հ, երբ գունատին այն շրթունքը,
երբ այն սիրտը ալ չբաբախէ՝ պիտի չկարծեմ որ կը քնանայ
աղջիկս, և արթննալով գիրկս պիտի վազէ՝ և իր հեշտալուր
ձայնով՝ Հայր կոչելով զիս պիտի գրկէ՝ պիտի գգուէ... Ո՛հ,
երբ ինքը մեռնի, երբ մեռնի իմ սրտիս միակ սէրը, ի՛նչ պիտի
ըլայ Սանատրուկ, եթէ ոչ գերեզմաններու վրայ թափառող
տխուր ստուեր մը՝ փառաց ճառագայթներով պսակուած :
Ո՛վ գիք՝ կը յնորիմ, թէ արդարեւ ձեռք մը ապագային աղօտ
և նսեմաստուեր ճակատին վրայ արեան տառերով իմ անունս
կը գրէ... զարհուրելով կ'անցնին ազգք և աղինք... Վրէժ-
խնդիր Երկինք, թող ձեր կայծակն իշնայ իր գլխուն վրայ՝
որ զիս ալ իրեն հետ թերևս յաճիւն փոխէ... ապա թէ ոչ՝

ո՛ւր պիտի գտնէ Սանատրուկ խաղաղութիւնը... երկիրս
 իրեն յիշատակներովը լի է... և գերեզմանին մէջ իր արիւն-
 լուայ սառուերը լուռ կեցած կը սպասէ ինծի... Բայց ի՞նչ...
 ինքը իմ աղջիկս չէ... մերժեց զիս խապառ... իր հայրը՝ իր
 փառքը՝ իրեն ամեն բանը ինծի թշնամի Աստուած մի է... Թող
 զոհ ըլլայ ուրեմն Արամազդայ և Սանատրուկ պատուոյն...
 Ահա կը մօտենան... բոց մը երակէ երակ կը խլրտի... մա-
 ղերս կը ցցուին գլխուս վրայ... անհաշտ Կատաղիք տարտա-
 րոսաց՝ շնչեցէք ոգւոյս մէջ ասելու թեան բոցը...

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՆՈՅՆ, ԹԱԴԵՈՍ, ՍԱՆԴՈՒԽՏ

ԹԱԴԵՈՍ. Ահաւասիկ կամք, արքայ...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛ւր է ամպարիշաը...

ԹԱԴԵՈՍ. Վշտերէ ընկճեալ՝ նուազած է անմեղ կոյսը...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ե՛լ, արթնցիր... նայէ այս քու արեանդ
 ծարուսի զէնքերը...

ՍԱՆԴՈՒԽՏ. (Սիւսիւս) Դեռ կ'ապրիմ... կարծէի թողու-
 ցած ըլլալ արդէն զաշխարհ...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Արիւնլուայ գրկերը բացած՝ քեզի կը սպասէ
 մահը...

ՍԱՆԴՈՒԽՏ. Պիտի մեռնիմ... այո... բայց 'ի սէր այն գո-
 րովանաց զոր ունէիր վրաս երթեմն... արեանս մէջ մարի քու
 կատաղութիւնդ... Թումբ մ'ըլլայ շերիմս ուր խորտակի դա-
 գրի քու զայրոյթդ... և երբ հոռնան զիս ամենքը՝ թշուառ
 քրիստոնեայ մը հոն ապաւինելով յիշէ զիս և լայ...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. (Աս Դահիճ) Ինչո՞ւ կ'ուշանայք...

ԹԱԴԵՈՍ. Ել երթանք՝ կոյս... Բայց... ո՞վ կը պատուէ աչքիս
 գէմ ապագային քողը... ո՞վ կը ընու զիս մարգարէական ազգե-
 ցութեամբ... Ի՛նչ զտրհուրելի տեսարաններ կը բացուին առ-
 ջեւս... Ահա կը կործանին մահեանք... կը գողան թագաւորք և
 տստուածք... և այն սիեզերական մթութեան մէջ, երկնից և
 երկրի մէջ տեղ՝ բոցանշոյլ խաչ մը կ'արձանանայ իբրև կապ եր-
 կուքին: Ո՛ւր էք աստուածք Ոլիմպոսի... նայեցաւ Բար-

ձրեալը և անհետացաք: Բիւրաւոր ծաղկապսակ հոգիք կը սլանան դէպ 'ի երկինք... Ո՞րն է այն երկիրը որ կրկին անգամ մարդկութեան որորոցն եղած է: Սովալլուկ գաղաննէրու նման՝ արեան հեղեղները ժայռերուն վըայէն կը գահաւիժին: Արդեօք այն արիւնները վըճժ կը խնդրեն, [թէ մարին պիտի անոնց մէջ այն ահաւոր վճիռները զոր անջինջ տառերով Արդարութիւնը իր ճակտին վըայ գրեց... Աւաղ... իր մահաբեր գեղեցկութեան զմայլած բիւրաւոր աշխարհակալք վըան կը յարձակին՝ և իր ճակտին գալինները փրցնելով գլուխին կը զարգարեն... Ընդ երկար բոլոր աշխարհիս վահանն ըլլալէն վերջը՝ կը կործանի Հայաստան, և անոր աւերակացը վըայէն կ'ողողեն բարբարոս ժողովուրդք զարեմուտս... Բայց դու, Սանատրուկ, ինչո՞ւ թափառական կը ջըջիս նսեմաստուեր անառաջ մէջ... Իր փայլակնացայտ աչքերը վըագ գարձուցած՝ ետեէդ կուգայ անողոք Արդարութիւնը, և գժնեայ ժպիտով մը ականջէդ կը մըմուայ « Վըճժինգրութիւն »... անգոր սուրդ պատեանը գարձուր. ահա անծանօթ ձեռքէ սլացած նետ մը՝ վախճան կը դնէ անօրէնութեանցդ... քու փառացդ խրոխտ շէնքը գերեզմանի մը մէջ կը կործանի կ'անհետանայ... Այլ մշտայաղթ կրօնքը՝ ազգաց, ժամանակաց և աստուածոց աւերակներուն վըայ ծփալով ինչպէս տապանակը ջրհեղեղին վըայ՝ անվնաս կը հասնի անձկատենչ նաւահանգիստը... Դու եւս ո՞վ կոյս՝ դու եւս սփոփուէ: Տես ինչպէս Հայաստան կը խոնարհի գերեզմանիդ վըայ որ իր նախատինքն ու պարծանքն է... Պատկառելով կ'անցնին անոր վըայէն դարերը...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. (Դահլիճը ցոլցնելով) Ահա ով պիտի լուցընէ քու յանդուգն շրթուիքներդ: զօրականք՝ նետաձիգ սպաննեցէք սա թշուառները...

ԹԱԴԵՈՍ. Խաղաղութիւն իջնայ քու վըագ Հայաստան... (Երբան 'իմ կոյս. առանձնանայ Սանատրուկ. Ժողովուրդի յառաջ մարտի:) Ա. Տես ի՞նչ աներկիւղ կեցեր է սա կոյսը...

Բ. Զհանդուրժեր սիրաս այս տանջանքը տեսներու. անմեղ էր ան...

Գ. Բարեկամք, բարեկամք սա հրաշքը նայեցէք...

Ա. Ո՞վ տէր... փախչինք... նետերը իր մարմնոյն մէջ չեն մտնար՝ այլ հոտ գառնալով գահիճները կը սպաննեն...

ԴԱՀԻՃՔ. (Ի հեռուստոս դահիճք որ անխնայ) Ո՛հ... ներէ կոյս սրբուհի... ոհ...

ԱՄԵՆԵՔԵԱՆ. Կուլայ Սանդուխտ... կուլայ...

Բ. Անշուշտ իր թշնամեացը համար կուլայ և կ'աղօթէ...

Գ. Աս ինչ փայլակ է... չորս կողմէն լոյս կ'անձրեւէ...

Ա. Ահա կ'իջնայ... կը լողայ արեանց մէջ... լուս-թիւն...

Գ. Աչքերնիդ երկինք դարձուցէք... բոցանշոյլ պատմու-
ճանով մէկը կ'իջնայ... առ երիտասարդը Երուանդ չէ...
(Ժողովուրդք համբոյժ) Ինքն է... ինքն է...

Գ. Լերանց ծայրերը նայեցէք... հրեղէն կառքերու պէս
ամպեր իջեր են... ինչ քաղցր ներդաշնակութիւն կը լսուի...
Տեսէք, Սանդուխտ 'ի ծունր իջեալ մահացու վերքը բռնե-
լով կարծես կ'աղօթէ...

Բ. Մեծ է Սանդուխտին Աստուածը...

Ա. Ահա թագաւորը կը սթափի իր թմբու-թենէն...

Գ. Սանդուխտին Աստուածը մերն ալ ըլլայ...

ԱՄԵՆԵՔԵԱՆ. Հեռանանք (Խորհրդէն հեռանալով)...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. (Ցնորեալ յոստահաբ) Թող զիս թող զիս, ահալ-
կու ստուեր. ինչու արեւանիչ սպիտակ պատմուճանաւդ
հոգւոյս վրայ իջնալով արթնցուցիր զայն իր մահագոյժ
թմբութենէն... Բոցեղէն ամպ մը կը պատէ երկինքը...
արեան ծով մը կ'ուռնէ գերիւն... զիս խեղդելու կուգայ...
Իմ աղջիկս... իմ աղջիկս տեսնեմ... և մեռնիմ: Դժբախտ
իմ... ահ... պատասխան չէք տար ինձի դահիճք... իմ աղ-
ջիկս դարձուցէք ինձի՝ գրկացս մէջ սեղմեմ աղջիկս՝ և թող
զայրացած աստուածք իրենց բոլոր կայծակները ճակտիս վը-
րայ սպառեն: Ի՞նչ... մեռա՛ւ... այն երկաթը որ իր արեամ-
բը կարմրեալ մտեցէք ծոցիս մէջ. տեսէք... իր անմեղ կո-
ղերէն արիւններ կը վազեն... ո՞վ թափեց զայն... ո՛հ լացէք
թշուառ հօր մը՝ լացէք անզգամ սրդեսպանի մը վրայ...
(Բռնուի ինչ քաղցր աղջկան յարեւոյն վրայ ինչ գրիւն) Դժբախտ իմ Սան-
դուխտ... տես ուրուն գրկացը մէջն ես... Ժպիտ մը... խօսք
մը... նայուածք մը... մոռցիր վայրկեան մը քու դահիճք և
հօր մը արցունքները տես... Սանդուխտ... (Սրբապաշտ աղ-
ջիկն անհայտ) Բայց ո՛հ կ'ապրի... դեռ կենաց նշոյլ մը իր
թաւիացեալ շրթանցը վրայ կը շողայ... չէ. չկրնար ըլլալ որ
երկինք կայծակը թափեմ ծաղիկները և բուռն ձգէ... իր

սրտէն բղխած արիւնը դեռ տաք է... Սանդուխտ, դուստր
իմ Սանդուխտ...

ՍԱՆԴՈՒԽՏ. (Հոգին աւանդելով). Հայր... կը ներեմ... քեզի...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ներե՛ւ... Խնժի՛... Խնժի՛ կը ներես... ո՛հ ան
ստեն վայրկեան մ'ալ ապրէ որ դաճի՞ր մահը տեսնես...
Բայց ի՞նչ... կը գոցես աչքերդ յաւիտեան... ո՛հ... ալ Սան-
դուխտս չկայ... Թշուա՛ն հայր... սանդութ Դիք... Այո՛ դու
վրէժդ լուծեցիր, այո՛ յաղթեցիր դուն Հրէի՛ց Աստուած...

Վ Ե Ր Ձ

Bayrische
Staatsbibliothek
München



